

ՀՅԴ ԳԵՄ-ի կազմակերպությամբ Արցախի զորակցական հասարակացումների մեջ



Կարդալ էջ 3

Ցայտարարություն ՀՅԴ Եւրոպայի Մարմիններու Ռաշոնական Ժողովի

Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի հրաւերով, 8 եւ 9 Յուլիս 2023-ին, Աթէնքի մէջ գումարուեցաւ Եւրոպայի ՀՅԴ Մարմիններու Ռաշոնական Ժողովը, մասնակցութեամբ եւրոպական տարածքին վրայ գտնուող հայազաղութիւններուն մէջ գործող կուսակցական մարմիններու ներկայացուցիչներուն:

- Ժողովը լսեց ՀՅԴ Բիւրոյի ու շրջաններու տեղեկագրերը եւ հանգամանօրէն քննեց հայրենի, համահայկական եւ տարածաշրջանային հարցերուն մասին զեկուցումներն ու դիմագրաւած մարտահրաւէրները:

- Քննեց շրջաններու կազմակերպական կեանքը, լուսարձակի տակ առնելով Եւրոպայի համայնքային կեանքի իրավիճակն ու հեռանկարները, գաղութներու հզօրացման անհրաժեշտութիւնը, մերժելով նաեւ ամէն տեսակի պառակտիչ քայլերը՝ ջլատելու սփիւռքի ուժականութիւնը:

- Ժողովը քննարկման լայն առարկայ դարձուց Արցախի հիմնահարցը եւ ներկայ իրավիճակը, մասնաւորապէս քննելով եւրոպական երկիրներու եւ համեւրոպական մակարդակի վրայ Հայաստանի ու Արցախի հարցերուն կապակցութեամբ եւրոպահայութեան համախմբման ծրագիրներու ծաւալումը յառաջիկայ ամիսներուն:

- Քննութեան նիւթ դարձաւ Եւրոպայի երկիրներու մօտեցումը Թուրքիոյ եւ Ատրպէյճանի նկատմամբ, ինչպէս նաեւ՝ Թուրքազերիական ծաւալած հակահայ գործունէութիւնը եւրոպական երկիրներուն եւ կառոյցներուն մօտ:

- Հայ դատի հետապնդման ծիրէն ներս, ժողովը լսեց զեկուցումներ ՀՅԴ Եւրոպայի Հայ դատի գրասենեակի ու շրջաններուն մէջ Հայ դատի աշխատանքներու գործունէութեան առնչութեամբ, ապա ճշդեց առաջնահերթութիւններն ու անմիջական քայլերը:

- Նոյն ծիրին մէջ, ժողովը անդրադարձաւ Եւրոպայի Հայ դատի գրասենեակին դէմ Ատրպէյճանի կողմէ կատարուած գրպարտական քարոզարշաւին եւ հաստատեց նման հակահայ գրքեւորումներու առաջը առնելու հրամայականը:

- Ժողովը կարեւորեց եւրոպական տարածաշրջանէն ներս հայազաղութիւններու գործունէութեան հասարակաց մարտահրաւէրներու եւ հեռանկարներու համադրումը, մարմիններու եւ կառոյցներու միջեւ գործակցութեան ընդլայնման կարելիութիւնները՝ համահայկական կամ մասնակի օրակարգերու իրագործման շրջագիծէն ներս:

ՀՅԴ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ
Աթէնք, 8 եւ 9 Յուլիս 2023

ԱԺ պատգամաւոր Լիլիթ Գալստեան եւ Հայ Դատի յանձնախումբը Պրիթիշ Գոլումպիայի վարչապետ Էպիի հետ արծարծեցին Արցախի ինքնորոշման հարցը



Կարդալ էջ 3

Լիլիթ Գալստեան Պրիթիշ Գոլումպիայի եւ Գանատայի խորհրդարանականներուն իրազեկեց Արցախի շրջափակման մասին



Կարդալ էջ 3

Գանատա-Արցախ խորհրդարանական բարեկամութեան խմբակցութիւնը կոչ կ'ուղղէ ապաշրջափակելու Լաչինի միջանցքը



Կարդալ էջ 3



HONDA GABRIEL

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Վանգուվրի մէջ ընթացող ԵԱՀԿ ԽՎ Ախտին Գանատայի Հայ Դատի յանձնախումբի անդամները Արցախի ինքնորոշման հարցը արծարծեցին ԵԱՀԿ պատգամաւորներուն հետ

Յունիս 30-ին, Վանգուվրի մէջ սկսաւ Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) խորհրդարանական վեհաժողովի (OSCE PA – ԵԱՀԿ ԽՎ) տարեկան 30-րդ նստաշրջանը: Հայաստան նստաշրջանին կը մասնակցի խորհրդարանական պատուիրակութեամբ, որուն մաս կը կազմեն ՀՀ Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանեանը, ԲԳ խմբակցութեան պատգամաւորներ Մարիա Կարապետեանը, Լիլիթ Մինասեանը, Արթուր Յովհաննիսեանը եւ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանը: Վեհաժողովի օրակարգի վրայ են քաղաքական բանտարկեալներու, գաղթականներու, պատերազմի հետեւանքներու, Փոտամոթեան դէմ պայքարի եւ փոքրամասնութիւններու իրաւունքներու հարցերը:

Նստաշրջանին կը մասնակցին 57 երկիրներու պատգամաւորներ եւ ներկայացուցիչներ: «Հորիզոն» շաբաթաթերթին կողմէ, որպէս լրագրող, վեհաժողովին կը մասնակցին Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանի անդամներ Յակոբ Տէր Յակոբեան եւ Վահէ Անտոնեան, որոնք նստաշրջանի առաջին օրը, Լիլիթ Գալստեանի հետ, Արցախի ազգային ինքնորոշման հարցը արծարծեցին վեհաժողովի մասնակից Գանատայի, Ֆրանսայի, Կիպրոսի, Իրլանտայի, Շոտլանտի, Հոլանտայի, Ֆինլանտայի եւ Սլովակիոյ պատգամաւորներուն հետ:

Գանատա-Արցախ խորհրդարանական բարեկամութեան խմբակցութիւնը կոչ կ'ուղղէ ապաշրջափակելու Լաչինի միջանցքը

Ատրպէյճանի կողմէ պարտադրուած Արցախի շրջափակման 200-րդ օրուան առիթով, Գանատա-Արցախ խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան համանախագահներ Ռէյչըլ Թամբս եւ ծերակուտական Լէօ Հոլսաքոս հրապարակեցին հաղորդագրութիւն մը, ուր կը շեշտուի շրջափակման անյապաղ վերջ տալու անհրաժեշտութիւնը:

Մնունդի սուր պակասն ու սակաւութիւնը, վառելանիւթի ու ելեկտրականութեան հասանելիութիւնը, արտերկրի հետ հաղորդակցութեան բացակայութեան հետ միատեղ ստեղծած են սուր ճգնաժամ, կը նշուի հաղորդագրութեան մէջ:

Բնակչութեան ստուար մասը, ներառեալ երեխաներն ու տարեցները, կը գտնուին թերսնման եւ սովի եզրին: Բժշկական հաստատութիւնները կը պայքարին դեղորայքի պակասին դէմ, իսկ հիւանդանոցներու մէջ վիրահատութիւնները կասեցուած են: Դպրոցներ եւ ուսումնական հաստատութիւնները կը փակուին, իսկ շատ մը առեւտրական հաստատութիւններ փակուած են, ու հազարաւոր քաղաքացիներ մնացած են առանց ապրուստի, կ'ըսուի հաղորդագրութեան մէջ:

Հաղորդագրութիւնը կ'եզրափակուի, շեշտելով որ շրջափակումը խոչընդոտ կը հանդիսանայ բանակցութիւններուն, եւ կոչ կ'ուղղուի անյապաղ ապաշրջափակելու Լաչինի միջանցքը:

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի յայտարարութիւնը

Ատրպէյճանի գինուած ուժերը, հերթական անգամ կոպտօրէն խախտելով 2020 թ. Նոյեմբերի 9-ին ընդունուած Եռակողմ յայտարարութեամբ Լեռնային Ղարաբաղում հաստատուած հրադադարի ռեժիմը, ս.թ. Յունիսի 27-ի լոյս 28-ի գիշերուայ ժամը 1.30-ից սկսած տարբեր գինատեսակներից կրակ են բացել Արցախի Հանրապետութեան տարածքի ուղղութեամբ, որի հետեւանքով զոհուել է մեր 4 հայրենակից:

Ատրպէյճանի կողմից Արցախի լրակատար շրջափակման պայմաններում, հրետանային միջոցների եւ անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ Արցախի Հանրապետութեան քաղաքացիների այս հերթական սպանութիւնը վկայում է, որ այդ հանրապետութեան ռազմաքաղաքական ղեկավարութիւնը, անտեսելով միջազգային հեղինակաւոր կառույցների կոչերն ու որոշումները, խաղաղութեան եւ երկխոսութեան կեղծ օրակարգերով սքողուած, ցեղասպանական գործողութիւններով ձգտում է ռազմական, քաղաքական, տնտեսական գործիքակազմերի կիրառմամբ հասնել իր հիմնական նպատակին՝ Արցախի վերջնական հայաթափմանը:

Ուշագրաւ եւ յատկանշական է, որ Ատրպէյճանի կողմից հրադադարի ռեժիմի պարբերաբար իրականացուող խախտումների այս նոր միջադէպը, նախորդ դէպքերին համանման, նոյնպէս արձանագրուել է այն ժամանակ. երբ ներկայումս ԱՄՆ պետական քարտուղարի միջնորդութեամբ Ուաշինկթոնում տեղի են ունենում Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերի նախարարների հերթական բանակցութիւնները՝ հայ-Ատրպէյճանական հակամարտութեան խաղաղ կարգաւորման հարցերի շուրջ:

Խորապէս անհանգստացած առկայ վտանգաւոր իրողութեամբ՝ Արցախի Հանրապետութեան ժողովրդի անունից դիմում ենք.

- ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներին՝ կարեկցանքի յայտարարութիւններէից, յորդորներից եւ խորհուրդներից զատ ձեռնարկել կոնկրետ գործնական քայլեր, մասնաւորապէս, պատժամիջոցներ կիրառել Ատրպէյճանի նկատմամբ՝ զսպելով նրա ագրեսիւ նկրտումները: Համոզուած ենք, որ երկակի ստանդարտներով գործելաոճը աւելի է ոգեւորում Ատրպէյճանին՝ նրան դարձնելով սանձարձակ եւ անվերահսկելի:

- Ռուսաստանի Դաշնութեանը՝ խաղաղապահ առաքելութեան շրջանակում առաւել կոշտ միջոցներով կասեցնել Ատրպէյճանի հակամարդկային, ցեղասպան գործողութիւնները:

- Ուաշինկթոնեան բանակցութիւններում Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեանը՝ անյապաղ դադարեցնել մեկնարկած բանակցութիւնները՝ մինչեւ Արցախի հետ շփման դժուած եւ ՀՀ սահմաններում լրակատար հրադադարի հաստատումը եւ այն պահպանելու փաստաթղթային երաշխիքների տրամադրումը, հակառակ պարագայում, բանակցութիւնների շարունակումը կը նշանակի Ատրպէյճանական կողմի ագրեսիւ պահուածքի խրախուսում եւ միջազգային մակարդակով արտօնութիւն:

Մեր խոնարհումը բերելով հայրենիքին իրենց կեանքը նուիրաբերած մեր չորս նահատակների յիշատակին՝ պատրաստակամ ենք շարունակելու նրանց սուրբ գործը:

ԱԺ պատգամաւոր Լիլիթ Գալստեան եւ Հայ Դատի յանձնախումբը Պրիթիշ Գոլումպիայի վարչապետ Էպիի հետ արծարծեցին Արցախի ինքնորոշման հարցը

Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) խորհրդարանական վեհաժողովի Վանգուվրի նստաշրջանի աւարտէն ետք, Գանատայի Արեւմտեան շրջանի Հայ Դատի յանձնախումբի կազմակերպութեամբ ԵԱՀԿ նստաշրջանին մասնակցած Հայաստանի պատուիրակութեան անդամ ՀՀ Ազգային ժողովի պատգամաւոր Լիլիթ Գալստեան յատուկ հանդիպում ունեցաւ Պրիթիշ Գոլումպիա նահանգի վարչապետ Տէյվիտ Էպիի հետ: Հանդիպման մասնակից էին Հայ Դատի յանձնախումբի անդամներ Վահէ Յակոբեան եւ Վահէ Անտոնեան:

Լիլիթ Գալստեան շնորհակալութիւն յայտնեց վարչապետ Էպիին հայ ժողովուրդին ցուցաբերած շարունակական զօրակցութեան համար, ինչպէս նաեւ Ապրիլ 24-ին Հայոց Յեղասպանութեան ոգեկոչումը Պրիթիշ Գոլումպիայի խորհրդարանի շէնքին մէջ կայացնելու եւ արցախահայութեան ինքնորոշման զօրակցութեան ի նշան՝ Արցախի պետական դրօշ յատուկ արարողութեամբ խորհրդարանին մէջ բարձրացնելու համար:

Պատգամաւոր Գալստեանը շնորհաւորեց վարչապետ Էպիին նահանգի ղեկավարութեան բարձրագոյն պաշտօնին ընտրութեան առթիւ եւ անդրադառնալով ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի ընթացքին իր կողմէ արծարծուած Արցախի հարցին, վերահաստատեց, որ արցախահայութիւնը պէտք է պահպանէ իր ազգային ինքնորոշման իրաւունքը, իսկ Ատրպէյճանի կողմէ աւելի քան 200 օր է ի վեր պարտադրուած շրջափակումը պէտք է անյապաղ վերջ գտնէ, վերականգնելով Լաչինի միջանցքով դէպի Արցախ ազատ մուտքը:

Վարչապետ Էպի շնորհակալութիւն յայտնեց պատգամաւոր Գալստեանին եւ վերահաստատեց Հայաստանին եւ Արցախին ջակցելու իր յանձնառութիւնը:

ԱԺ պատգամաւոր Լիլիթ Գալստեան Պրիթիշ Գոլումպիայի եւ Գանատայի խորհրդարանականներուն իրազեկեց Արցախի շրջափակման մասին

Յուլիս 4-ին, Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) խորհրդարանական վեհաժողովի Վանգուվրի նստաշրջանի աւարտէն ետք, Գանատայի Արեւմտեան շրջանի Հայ Դատի յանձնախումբի կազմակերպութեամբ ԵԱՀԿ նստաշրջանին մասնակցած Հայաստանի պատուիրակութեան անդամ ՀՀ Ազգային ժողովի պատգամաւոր Լիլիթ Գալստեան հանդիպումներ ունեցաւ Պրիթիշ Գոլումպիայի Դաշնակցային եւ նահանգային խորհրդարանականներու հետ:

Գանատայի Ֆիննասական նախարարի խորհրդարանական քարտուղար Թերի Պրիշի հետ հանդիպման ընթացքին Գալստեան տեղեկացուց Արցախի մէջ տիրող իրավիճակին մասին՝ շարունակուող անօրինական շրջափակման, հրադադարի եւ Նոյեմբերի 9-ի պայմանաւորուածութիւններու շարունակական խախտումներուն, Ատրպէյճանի կողմէ սանձազերծուած ռազմական գործողութիւններուն եւ չորս հայ զինձաւորներու սպանութեան մասին: Աւելին, Գալստեան իր մտահոգութիւնը յայտնեց, որ Գանատայի ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի պատուիրակութեան մի քանի անդամներ դէմ քուէարկած են այն բանաձեւերուն, որոնք Ատրպէյճանը պատասխանատուութեան կ'ենթարկեն՝ յանցագործութիւններուն համար: Թերի Պրիշ խոստացաւ հետապնդել զանատացի պատուիրակներու դրսեւորած այս վարքագիծի պատճառները եւ խոստացաւ այդ հարցը բարձրացնել կառավարական յանձնաժողովներու յառաջիկայ հանդիպումներու ընթացքին, միաժամանակ ան իր լրակատար զօրակցութիւնը յայտնեց Պրիթիշ Գոլումպիայի հայ համայնքին: Հանդիպման ներկայ էին Գանատայի Արեւմտեան շրջանի Հայ Դատի յանձնախումբի անդամներ Վահէ Անտոնեան եւ Վահէ Յակոբեան:

Նոյն օրուան ընթացքին, պատգամաւոր Գալստեան Վանգուվրի Հայ Կեդրոնին մէջ հանդիպում ունեցաւ Պրիթիշ Գոլումպիա նահանգի առողջապահութեան նախարար Ատրիան Տիքսին եւ Գանատայի խորհրդարանի անդամ Փարմ Պէյնսին հետ:

Նախարար Տիքսը քաջատեղեակ ըլլալով Արցախի բնիկ հայերուն դէմ շարունակուող ատրպէյճանական յարձակապաշտ վարքագծին մասին, շեշտեց այն մասին, որ դիտումնաւոր որեւէ գործողութիւն, որ 120 հազար բնակիչներու, ներառեալ 30,000 երեխաներու կը զրկէ բժշկական անմիջական օգնութիւնէ՝ յանցագործութիւն է, եւ այդպիսի արարք չի կրնար հանդուրժել ըլլալ Պրիթիշ Գոլումպիայի, Գանատայի եւ միջազգային հանրութեան համար:

Գանատայի խորհրդարանի անդամ Փարմ Պէյնսի հետ հանդիպման ընթացքին Լիլիթ Գալստեան մանրամասնօրէն զեկուցեց Ատրպէյճանի հակահայ անօրինական գործողութիւններուն, արցախահայութեան դիմադրուած մարդասիրական ճգնաժամին, ինչպէս նաեւ՝ Արցախի բռնադատուած տարածքներուն վրայ գտնուող հայկական պատմական մշակութային ժառանգութեան Ատրպէյճանի կողմէ դիտումնաւոր ոչնչացման մասին: Գալստեան շեշտեց, որ միայն Արցախի ժողովուրդի ազգային ինքնորոշման եւ անվտանգութեան լրարժէք երաշխիքներու միջոցով արցախահայութիւնը կրնայ կասեցնել Պաքուի ցեղասպանական գործողութիւնները: Պատգամաւոր Պէյնս խոստացաւ Գանատայի խորհրդարանի իր գործընկերներուն իրազեկել Արցախի իրավիճակին մասին:

ՀՅԴ ԳԵՄ-ի կազմակերպութեամբ Արցախի զօրակցական հաւաք Վանգուվրի մէջ

ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան (ԳԵՄ) Վանգուվրի «Արշաւիք Երակեան» մասնաճիւղի կազմակերպութեամբ Յուլիս 2-ին Արցախի զօրակցութեան հաւաք տեղի ունեցաւ Vancouver Convention Centre-ի շէնքին դիմաց, ուր կը կայանայ Եւրոպայի անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) խորհրդարանական վեհաժողովի (OSCE PA — ԵԱՀԿ ԽՎ) 30-րդ նստաշրջանը: Հաւաքի մասնակիցները ԵԱՀԿ վեհաժողովին կոչ ուղղեցին ճանչնալու Արցախի ազգային ինքնորոշման իրաւունքը: Հաւաքի մասնակիցներուն հետ հանդիպեցան ՀՀ Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ, Սարգիս Խանդանեանը, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանը, Գանատայի խորհրդարանի անդամ Տոն Տէյվիսը եւ Գանատայի ՀՀ դեսպանատան երկրորդ քարտուղար Արման Սուֆրեանը:

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի ամավերջի հանդեսներ

Երկրորդականի 54 շրջանաւարտներ, նախակրթարանի 58 աւարտականներ, եւ Ծաղիկ դասարանի 65 աշակերտներ վկայուեցան յաջորդական երեք հանդեսներու ընթացքին

«Սօսէ Մայրիկ» հունձքը ուխտեց տէր կանգնիչ Հայաստանին ու Արցախին ու երբե՛ք ծունկի չգալ

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի «Բաստրմաճեան Երկրորդական» շրջանաւարտներու ամավերջի հանդեսն ու վկայականաց բաշխման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 17 Յունիս 2023-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի ՀՄԸՄ-Կամբ «Հայկ Մարգարեան» մարզասրահէն ներս, ներկայութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Տէր Բարբէն Սրբ. Արք. Չարեանի, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչ Տէր Սուրէն Սրբ. Արք. Գաթարոյեանի, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի, Քեպէզի խորհրդարանի անդամ տիկ. Սոնա Լախոյեան Օլիվիէի, հոգեւոր հայրերու, բարերարներու, վարչական խորհուրդի, հոգաբարձութեան, հիմնադրամներու, հաստատութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներու, ծնողներու եւ ուսուցչական կազմի անդամներու:

Ուսուցիչներու եւ շրջանաւարտներու հանդիսաւոր մուտքէն ետք, հանդիսութիւնը մեկնարկուեցաւ Գանատայի, Հայաստանի եւ Արցախի քայլերգներով: Հանդիսավար պրն. Մհեր Գարագաշեան իր բացման խօսքով ողջունեց ներկայներն ու Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի 2023 տարուան հունձքը, որ մկրտուած է քաջարի հայուհի «Սօսէ Մայրիկ»-ին անունով, անոր մահուան 70-ամեակին աւիթով, հետեւաբար «Ձօն՝ Սօսէ Մայրիկին» համադրումով, շրջանաւարտներ՝ Միլանա Ճապարեան, Լոռի Միլանա, Սարին Բաբայեան եւ Ալիք Հատիտեան ներկայացուցին անոր կեանքին ու գործունէութեան գլխաւոր կէտերը: Հանդէսի գեղարուեստական յայտագիրի բաժնով հնչեց «Պինկտօլ» ժողովրդական երգը, կատարողութեամբ՝ Աննա Թեփրեանի (երգչուհի), Ռազմիկ Ազգաստեղի (սաքսոֆոն), Միքայէլ Պոյաճեանի (ջութակ), Վարդգէս Թիւֆէնքեանի (ջութակ), Լորի Օլիվիէի (հարուստային գործիքներ) եւ Մհեր Խաչատուրեանի (տնային): Այնուհետեւ հանդիսավար պրն. Մհեր Գարագաշեան յայտարարեց, թէ որովհետեւ Տայ ժողովուրդը իր պատմութեան ամենագլխուն հանգրուաններէն մէկը կ'ապրի, երբ վտանգուած են ոչ միայն Արցախի, նոյնպէս հայրենիքի ապագան, «Սօսէ Մայրիկ» հունձքը իր ձեռով կ'ողջէ իր պատգամը փոխանցել Հայաստանի իշխանութիւններուն, հայրենիքի, Արցախի եւ ամբողջ սփիւռքի հայրենակիցներուն, եւ այդ նպատակով պիտի մեկնաբանեն հայրենի երգիչ Արաքօ Իսպիրեանի «Ծնկի չենք գալու» նորագոյն երգը: Սակայն նախքան երգի կատարումը ցուցադրուեցաւ Արաքօ Իսպիրեանի տեսագրուած անակնկալ պատգամը, որուն մէջ ան կ'ողջունէր «Սօսէ Մայրիկ» հունձքի յանձնառութիւնը եւ կը շնորհաւորէր բոլոր շրջանաւարտները. ապա աշակերտները միասնաբար կատարեցին երգը, ներկայներուն ապրեցնելով ամալ վերջի հանդէսի ամէնէն յուզիչ պահը, մանաւանդ երբ բարձրացուցին «Հայաստանս ծնկի չի գալու, Արցախս ոչ մէկին չեմ տալու...» երգին բառերուն պատասխանները:

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի հիմնադրամի խօսքը փոխանցեց հիմնադրամի տնօրէնուհի տիկ. Թամար Եղիշեան, որ ներկայացուց անցնող տարեշրջանի գործունէութիւնը: Վարժարանի երկրորդականի բաժնի կրթական պատասխանատու տիկ. Սելին Թուրքի, եւ վարժարանի փոխ տնօրէնուհի, նախակրթարանի առաջին բաժնի պատասխանա-

տու տիկ. Տիան Պայկըն, միասնաբար ներկայացուցին ուսուցիչներու գերազանցութեան եւ մանկավարժական նորարարութեան մրցանակի թեկնածուներուն 4 ծրագրերը, ապա բեմ հրաւիրուեցան սոյն մրցանակը հաստատած վարժարանի շրջանաւարտ տղաքթ. Արի Մկրտիչեան եւ ընդհանուր տնօրէնուհի տիկ. Լորի Ապրաքեան, որոնք մրցանակը յանձնեցին երկրորդականի ֆրանսերէն լեզուի դասատուներ տիկ. Միլիամ Լոզոնի եւ պրն. Գլէման Ամֆրոնի, որոնք բարձրագոյն կարգերու աշակերտներուն համար մշակած էին գրելու աշխատանքի նորարար ծրագիր մը: Յայտագիրը շարունակուեցաւ «Optimath» նահանգային թուաբանական մրցանքի գնահատելի արդիւնքներ արձանագրած աշակերտներու մրցանակներու յանձնումով, է. կարգէն՝ Միա Միլվա Գաննի-գարոյին, Լ. կարգէն՝ Վազգէն Հայրապետեանին, եւ Ժ. կարգէն՝ Վայք Աճէմեանին:

Շրջանաւարտներուն իր սրտի խօսքը փոխանցեց ընդհանուր տնօրէնուհի տիկ. Լորի Ապրաքեան, որ անդրադարձաւ շրջանաւարտներուն անցած դպրոցական ճանապարհին, մանկավարտէզէն մինչեւ երկրորդական, եւ այդ ընթացքին անոնց դիմագրուած գլխաւոր մարտահրաւերներուն, ուսումնականէն մինչեւ համաճարակ, եւ ոմանց համար երկրի ու միջավայրի փոփոխութիւն, նոր լեզուի ու նոր օրէնքներու ընտելացում: Տնօրէնուհին նշեց, որ մարտահրաւերները բազում ըլլալով հանդերձ, աշակերտները յաջողապէս դիմագրուեցին զանոնք, խաղով, երգով, պարով, ու չարածիտութիւններով հասան աւարտական դասարան: Տիկ. Ապրաքեան երախտագիտութեան խօսք ուղղեց Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ դպրոցի վարչական խորհուրդին, անոր յարկին տակ գործող բոլոր միութիւններուն եւ հայկական վարժարանի նեցուկ կանգնող բոլոր բարերարներուն, որոնց նուիրական աշխատանքին եւ աջակցութեան շնորհիւ վարժարանը կը գոյատեւէ 50 տարիներէ ի վեր: Ան նաեւ նշեց, որ այս հունձքի շրջանաւարտներէն ոմանք կը ներկայացնեն այն առաջին սերունդը, որ իր ուսումը սկսաւ «Արամ եւ Պերճուհի Մարգարեան» մանկամտերէն եւ այսօր կ'աւարտէ «Բաստրմաճեան երկրորդական»ը, հաստատելով որ այս էր տեսլականը համայնքի ղեկավարներուն, երբ անոնք հիմը դրին այս վարժարաններուն: Տնօրէնուհին շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն եւ ուսուցիչներուն, որոնք ո՛չ մէկ ճիգ խնայեցին այս հունձքի կազմաւորման ու դաստիարակութեան համար: Ան նաեւ շնորհաւորեց շրջանաւարտները, եւ յորդորեց անոնց ըլլալ անուանի կին գործիչ Սօսէ Վարդանեանի արժանաւոր ծառանգողները, ըլլալ հայրենասէր, յանդուգն, յանձնառու եւ անձնուէր հայ, պատրաստ՝ անձը գոհաբերելու յանուն ժողովուրդի իրաւունքներուն պաշտպանութեան: Տիկ. Ապրաքեան խօսքը եզրափակեց Արմէն Գարոյի մէկ պատգամով՝ «Այսօր նոր շրջանի մը առաջ ենք կանգնած եւ պէտք ունինք նոր սերունդի մը՝ սկսուած աշխատանքը շարունակելու համար, բոլորովին այլ պայմաններու մէջ. այդ դերը ձեռքի է վիճակուած: Շուտ ըրէ՛ք, մեծացէ՛ք, բայց լաւ պատրաստուեցէ՛ք ձեր վրայ ընկած պատմական պարտականութիւնը յաջող կերպով կատարելու համար...»:

Վկայականներու եւ մրցանակներու բաշխումը կատարուեցաւ ընդհանուր



տնօրէնուհի տիկ. Լորի Ապրաքեանի եւ վարժարանի վարչական խորհուրդի ատենապետ տիար Գրիգոր Տէր Ղազարեանի ձեռամբ: Պատուոյ գերագանց յիշատակութեան, Սուրբ Յակոբ արժանանաց գնահատագրի, ուսումնական ու յատուկ դասախոսութիւնը գերազանցութեան, հայերէն լեզուի ու գրաւոր արտայայտութեան, համայնքային յանձնառութեան, կամաւոր աշխատանքի, ինքնագերազանցման, ղեկավարի յատկանիշներու, վարժարանի դեսպանի, մարզական, մշակութային ու միութենական բազմաթիւ մրցանակներու ու կրթնապատիւ կողքին, յանձնուեցաւ նաեւ Գանատայի ընդհանուր կառավարիչ շքանշանը, բարձրագոյն միջին ապահոված աշակերտուհիին՝ Արնի Փիլիպոսեանին:

Ֆրանսերէն, հայերէն եւ անգլերէն լեզուներով աշակերտական ուղերձները յաջողաբար արտասանեցին Ռաֆայէլ Մարտիրոսեան, Սեսիլա Քէլլէեան եւ Մելիսա Ճապարեան, որոնք պատմեցին իրենց անցած ուղիին, Սուրբ Յակոբ վարժարանէն ներս ստեղծած յիշատակներուն եւ ապրած փորձառութիւններուն մասին, եւ երախտագիտութեան խօսքեր յղեցին իրենց ծնողներուն ու ուսուցիչներուն:

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Տէր Բարբէն Սրբ. Արք. Չարեան իր եզրափակիչ պատգամով բարձր գնահատեց «Սօսէ Մայրիկ» հունձքին փոխանցած պատգամը չընկրկելու ու ծունկի չգալու, ո՛չ թշնամիին, ո՛չ ալ կեանքի դժուարութիւններուն դիմաց, հաստատելով որ այս յանձնառու սերունդն է, որ երբեք պիտի չարտօնէ Հայաստանն ու Արցախը յանձնել: Ան գրուածեց վարժարանի տնօրէնութեան ու ուսուցչական կազմին աշխատանքը, շնորհաւորեց ծնողներն ու շրջանաւարտները, մաղթելով անոնց նորանոր յաջողութիւններ:

Նշենք, որ բոլոր շրջանաւարտները Քեպէզի Ազգային ժողովի գնահատագրեր ստացան, արամագրուած՝ Ան Լորան

շրջանի երեսփոխան տիկ. Մարուս Ռիզբի կողմէ, ինչպէս նաեւ անոնք ստացան յիշատակի գրիչներ, արամագրուած՝ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի վարչական խորհուրդին կողմէ, «Նոր Կտակարան» արամագրուած՝ Հայ Առաքելական Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ քոյրերուն կողմէ, Տղաքթ. Կարպիս Հարպոյեանի «Բիշկին խօսք» գիրքերու Գ. եւ Գ. հատորներէն օրինակներ, «Սփիւռք, ինքնութիւն, աշխատանք» գիրքերուն Ա. հատորը՝ Տէր Գառնիկ Աւագ Քահանայ Գոյուսեանի կողմէ, «Հորիզոն»-ի Հայոց ցեղասպանութեան նուիրուած բացառիկ հրատարակութիւնը եւ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի նախկին աշակերտներու միութեան կողմէ պատրաստուած կերպասէ պայուսակներ:

Հանդէսէն ետք, շրջանաւարտներուն պատուին, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն մը «Ահարոնեան» սրահին մէջ, ուր անոնք հատեցին իրենց կարկանդակը, պարեցին ու յիշատակի լուսանկարներ առին իրենց հարազատներուն եւ ուսուցիչներուն հետ:

«Սարաֆեան նախակրթարանի աւարտականները խոստացան մնալ հաստատակամ՝ հասնելու իրենց նպատակին»

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի «Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան» նախակրթարանի Զ. դասարանը աւարտող աշակերտներուն ամավերջի հանդէսն ու վկայագրերու բաշխման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 18 Յունիս 2023-ին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի ՀՄԸՄ-Կամբ «Հայկ Մարգարեան» մարզասրահէն ներս, ներկայութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Տէր Բարբէն Սրբ. Արք. Չարեանի, Ազգային

Ս. Յակոբ... Ծար. էջ 8

Ս. Յակոբ Ազգային վարժարանի թղթակցական բաժանմունք

Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի 2022-2023 տարեշրջանի ամապերջի հանդէսներ

ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանին համար Յունիս 2023-ը տօնական ամիս էր, որուն ընթացքին տեղի ունեցան «Պապայեան» մանկապարտէզի, «Գոլուեան» նախակրթարանի եւ «Լափոյեան» երկրորդական վարժարանի ամապերջի հանդէսներն ու վկայականներու բաշխումը, ներկայութեամբ ծնողներուն, ուսուցչակազմին, պաշտօնէութեան, համայնքի ներկայացուցիչներուն եւ հանրութեան:

Ուրբաթ, 9 Յունիսին, երեկոյեան ժամը 5:30-էն սկսեալ եռուշեր էր Թորոնթոյի Հայ Երիտասարդական Կեդրոնի մուտքին: 44 մանուկներ, իրենց ծնողներուն ընկերակցութեամբ ժամանեցին կեդրոն, ուրախ եւ խանդավառ մթնոլորտ մը ստեղծելով:

Ձեռնարկը սկսաւ «Համազգային» թատերասրահին մէջ, յիշատակի նկարներու յարակցումով մը, որ կը ներկայացնէր Միլ կարգէն մինչեւ Մադրիլ կարգի մեր աշակերտներուն գործունէութիւնները: Մինչ հանդիսատեսը սուգուած էր յիշատակներու ծովին մէջ, 44 շրջանաւարտ ծաղիկները կը շարունակէին բեմին վրայ, վարագոյրներու ետին: Կ'աւարտի ներկայացումը: Կը հնչեն Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգները, ու ապա վարժարանի տնօրէն Բաբգոյի Սարգիսեանը կ'ողջունէ ներկաները եւ պաշտօնապէս բացումը կը յայտարարէ հանդէսը: Կը բացուի վարագոյրը: Շրջանաւարտները մեզ կը դիմաւորեն իրենց անմեղ ժպիտներով եւ յայտագիրը կը բանան «Իմ Արցախ Աշխարհ» երգով (խօսք՝ Լիլիթ Հէյրաթեանի, երաժշտ.՝ Եւա Եղոյեանց-Ջարգարեանի) եւ Ռուբէն Միլիթարեանի «Իմ Երկիր, իմ Հայաստան» ասմունքով: Անգլերէն լեզուով կ'ասմունքեն «Kindergarten Graduation» կտորը եւ կ'երգեն «Just Dance» երգը, իսկ ֆրանսերէնով կ'երգեն «Alouette» երգը: Հանդէսի առաջին բաժինը կը փակուի Իրինա Խաչատրեանի «Հրաժեշտ Մանկապարտէզին» երգով:

Եւ կը հասնի սպասուած պահը: Փոխ-տնօրէն տիկին Ալլա Գազուսեան բեմ կը հրաւիրէ մանկապարտէզի ուսուցիչները եւ անոնց կը նուիրէ ծաղիկներ: Տնօրէն Բաբգոյի Սարգիսեանի, փոխ-տնօրէն Ալլա Գազուսեանի եւ Մադրիլ կարգի ուսուցիչներու ձեռքով կը կատարուի վկայականներու բաշխումը: Այսպէս, ծաղիկները հրաժեշտ տուին մանկապարտէզի ջերմ կեանքին եւ ուրախ խաղերուն, եւ ցոյց տուին իրենց պատրաստակամութիւնը՝ անցնելու նախակրթարանի Ա. դասարան՝ պարելով «Կենաց Հերոսներին» պարը:

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հովիւ Տէր Տաթեւ Աւագ Քահանայ Միջաշխեանի սրտի խօսքով ու «Պահպանիչ»-ով վերջ գտաւ հոգեթով հանդիսութիւնը:

Յաջորդող Ուրբաթ օր, 16 Յունիսին, «Գոլուեան» նախակրթարանի ընթացքը աւարտող 35 աշակերտներու «Համազգային» թատերասրահ հանդիսաւոր մուտքով եւ Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգներու յոտնկայս ունկնդրութեամբ տեղի ունեցաւ վարժարանի 8-րդ կարգի հանդէս-վկայականներու բաշխումի երեկոն: Ձեռնարկը կը հանդիսավարէր վարժարանիս հայերէն լեզուի եւ գրականութեան վաստակաշատ ուսուցիչ տիկին Յասմիկ Պապեանը:

Շրջանաւարտները հանդէս եկան «Ձօն Մեսրոպ Մաշտոցին եւ մեր գոյատեւման ազգակ' հայ լեզուին» խորագրով հայոց լեզուին նուիրուած ծաղկաքաղով մը, զոր համադրած էր տիկին Պապեան: Երախտիքի խօսքեր արտասանեցին հայերէնով՝ Նարինէ Արթին, անգլերէնով՝ Շանթ Մաքսուտեան եւ ֆրանսերէնով՝ Քարինա Սարգիսեան:

Տնօրէնութեան խօսքը փոխանցեց տնօրէն Բաբգոյի Սարգիսեան, որ յայտնեց, թէ վարժարանիս համայնքը իր շնորհակցութիւններու առիւծի բաժինը կը պարտի «անմասն, ժրջան եւ նուիրուած անձնակազմին»: Սարգիսեան լուսարձակի տակ առաւ հեռատես եւ նուիրեալ համայնքի ղեկավարներու տեսիլքն ու աշխատանքը, որով հիմը դրին այս վարժարանին:

Ապա, 8-րդ կարգի ուսուցիչներուն, տնօրէնին եւ կրթական խորհուրդի ատենապետին ձեռամբ տեղի ունեցաւ մրցանակ-վկայականներու բաշխումը: Կրթական խորհուրդի ատենապետ տիար Վազրիկ Շարապխանեան շնորհաւորանքի խօսք ուղղեց շրջանաւարտներուն, ծնողներուն եւ ուսուցիչներուն: Ապա բեմ հրաւիրեց բազմավաստակ կրթական մշակ, 33 տարիներ նախակրթարանին մէջ հայոց լեզու եւ պատմութիւն աւանդած, սերունդներ դաստիարակած, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին արժանացած, բոլորին սիրելի տիկին Սիլվա Փայլեանը: Շարապխանեան վեր առաւ Փայլեանի տարիներու վաստակը ու ապա պարգեւատրեց զինք ապակեայ գնահատագիրով եւ Մայքըլ Արամի ձեռամբ պատրաստուած յուշամետաղով, որուն վրայ պատկերուած էր ՀՕՄ-ի գինանշանը՝ շրջապատուած մանուկներով: Իր կարգին, տիկին Փայլեան փոխանցեց սրտի խօսքը, շնորհաւորեց նախակրթարանի տարիներուն իրեն աշակերտած շրջանաւարտ այս սերունդը եւ վեր առաւ հայկական վարժարանի կարեւոր դերը: Ապա հրաժեշտ տուաւ վարժարանին, յայտնելով որ ան որոշած է կոչուել հանգստեան: Հանդիսատեսը յոտնկայս ծափողոյններով իր գնահատանքը յայտնեց տիկին Փայլեանի տարիներու վաստակին:

Տէր Տաթեւ Աւագ Քահանայ Միջաշխեան արտասանեց իր սրտի խօսքն ու կատարեց «Պահպանիչ»-ը: Շրջանաւարտներուն հանդիսաւոր ելքով փակուեցաւ հանդիսութիւնը: Եւ վերջապէս, 23 Յունիսի երեկոյեան ժամը 7:00-ին, մանկապարտէզի եւ նախակրթարանի վկայականներով արդէն զինուած, եւ երկրորդական վարժարանի ընթացքը աւարտած 20 երիտասարդներ, շաբաթ մը ամբողջ հետեւելով երկրորդական կարգերու հայ գրականութեան եւ հայ դատի ուսուցիչ տիկին Աշխէն Մալխասեանի ցուցմունքներուն եւ ուսուցողութեան, հանդիսաւոր մուտքով շարունեցան Թորոնթոյի Հայ Երիտասարդական Կեդրոնի «Համազգային» թատերասրահի բեմին վրայ: Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգներէն ետք, տիկին Մալխասեան ողջունեց ներկաները եւ կը հաստատեց ներկայութիւնը ՅՅԳ Կեդրոնական Կոմիտէի եւ «Ս. Թէօֆիլեան» կոմիտէի, եկեղեցիներու եւ կրօնական հայրերու, Հայ Կեդրոնի յարակից միութիւններու, ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի ներկայացուցիչներուն, եւ բարերարներուն: Մալխասեան յայտնեց, որ այս 20 երիտասարդները «մեր աչքերուն առջեւ կազմաւորուեցան եւ դաստիարակուեցան իբրեւ տիպար քաղաքացիներ ու հայրենասէր հայեր եւ այսօր հաստատ քայլերով պիտի շարունակեն իրենց երթը դէպի նորանոր բարձունքներ»:

Շրջանաւարտները հանդէս եկան ժազ Ս. Յակոբեանի «Մենք» կտորի խմբական ներկայացումով: Հրաժեշտի ուղիւրդներ արտասանեցին հայերէնով՝ Արամ Թիքեճեան եւ Անուշ Յարութիւնեան, անգլերէնով՝ Քրիստ Տապաղեան եւ ֆրանսերէնով՝ Գայիանէ Թորոսեան:

Շրջանաւարտները հանդէս եկան ժազ Ս. Յակոբեանի «Մենք» կտորի խմբական ներկայացումով: Հրաժեշտի ուղիւրդներ արտասանեցին հայերէնով՝ Արամ Թիքեճեան եւ Անուշ Յարութիւնեան, անգլերէնով՝ Քրիստ Տապաղեան եւ ֆրանսերէնով՝ Գայիանէ Թորոսեան:



Բեմ հրաւիրուեցաւ տնօրէն Բաբգոյի Սարգիսեան: Ան նշեց, որ այսօրուան ստանալիք վկայականներով շրջանաւարտները կը միանան ծանր պատասխանատուութիւններ կրող այն փաղանգին, որ իր յաճախած միջավայրերուն մէջ կը դառնայ հայ ազգի ու դատի առաքեալը եւ իր յաջողութիւնները միշտ կը ծառայեցնէ ազգի վերելքին, շնչտեղով որ այդ հոգեթով է, որ Թորոնթոյի Հայ համայնքը կրցած է գոյատեւել: Սարգիսեան յայտնեց, որ այս հունձքը յատուկ է, որովհետեւ առաջինն էր, որ այցելեց հայրենիք, 44-օրեայ պատերազմէն ետք, որ սակայն չկրցաւ տեսնել թշնամիին յանձնուած Արցախը: Սարգիսեան վերջիցեց, որ աւարտական անցեալ հանդէսին վարժարանը ստեղծեց աւանդութիւն մը՝ յաջորդական հունձքերը անուանելու հայրենիքի տարածքներու անուններով, ամբարանդելու մեր շրջանաւարտներու պահանջատէր ոգին: «Վկայելով ձեր տարիներու ընթացքին ցուցաբերած ազգանպաստ գործերն ու ձեր բուռն հայրենասիրութիւնը, տպաւորուելով ձեր խմբային այն նկարին, ուր ձեր աչքերը յատուկ էիք դէպի շրջապատու Արարատ, եւ լսելով ձեր արտասանած բանաստեղծութեան «Մենք աշխարհակալ անկախ Արարատ»-ը, ձեր հունձքը կ'անուանենք «Արարատ» հունձք: Ժամանակ մը, մեր սուրբ Արարատն ալ ոմանք վաճառքի հանած էին: Մենք, այսօր, մեր առջեւ կանգնած «Արարատ» հունձքին հետ միասին, կը հաստատենք, որ Արարատը մեր սիրտն է, մեր հոգին է, մեր անմար պայքարի սրբազան խորհրդանիշն է», յայտարարեց Սարգիսեան:

12-րդ կարգի ուսուցիչներուն, տնօրէնին եւ կրթական խորհուրդի ատենապետին ձեռամբ տեղի ունեցաւ մրցանակ-վկայականներու բաշխումը: Խօսք առաւ կրթական խորհուրդի ատենապետ տիար Շարապխանեանը,

շնորհաւորելով շրջանաւարտները, ծնողները եւ ուսուցիչները: Ապա բեմ հրաւիրեց բազմավաստակ կրթական մշակ, 37 տարիներ վարժարանիս նախակրթարանին եւ միջնակարգին մէջ հայոց լեզու եւ գրականութիւն, ու պատմութիւն աւանդած, սերունդներ դաստիարակած, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին արժանացած, բոլորին սիրելի տիկին Յասմիկ Պապեանը: Շարապխանեան վեր առաւ Խառնուկեանի տարիներու վաստակը, նշելով որ ան եղած է իր եւ տնօրէն Բաբգոյի Սարգիսեանին ուսուցիչը: Շարապխանեան յանձնեց պարգեւեալին ապակեայ գնահատագիր եւ Մայքըլ Արամի ձեռամբ պատրաստուած յուշամետաղ, որուն վրայ պատկերուած էր ՀՕՄ-ի գինանշանը՝ շրջապատուած մանուկներով: Իր կարգին, պարգեւատրեալը փոխանցեց իր սրտի խօսքը, նշելով յիշատակելի դէպքեր եւ զարգացումներ, շնորհակալութիւն յայտնեց բոլոր նախկին թէ ներկայ տնօրէններուն եւ պաշտօնակիցներուն եւ ապա յայտնեց, որ պիտի կոչուի հանգստեան: Հանդիսատեսը յոտնկայս ծափողոյններով իր գնահատանքը յայտնեց տիկին Պապեանի տարիներու վաստակին:

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Վարդան Մրգ. Վարդապետի սրտի խօսքէն եւ օրհնանքէն ետք հնչեց «վերջին զանգ»-ը, «Արարատ» հունձքի շրջանաւարտները նետեցին իրենց գլխարկները, վերջին անգամ ըլլալով նկարուեցան ուսուցիչներուն հետ ու սրահէն դուրս ելլելով բարձր թռիչքով, հայու հոգեթով, հայու առաքելութեամբ ու հայու հպարտութեամբ հրաժեշտ տուին վարժարանին՝ ուղղուելու դէպի լուսաշող ապագայ:

Խառնուկեան

ՀՅԴ Երիտասարդական կառույցը միշտ պատնէշի վրայ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան 90-ամեակ

«Հիմնականը հայ երիտասարդութեան ազգայնացումն ու հայրենացումն է, անոր ազգային, քաղաքական, լեզուական, բնակչական եւ ընկերային մտածողութեան զարգացումը ու հաւաքական կամքի դարձումը»
Սարգիս Զէյրեան

90 տարի առաջ, Յունիս 16-ին, Պոսթընի մէջ կը կայանար Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան (ՀԵԴ) առաջին խորհրդակցական պատմական ժողովը, որ պիտի հանդիսանար սկիզբը Դաշնակցութեան երիտասարդական կառույցի սաղմնաւորման ու հետագայ զարգացման: Միացեալ Նահանգներ գործուող Գարեգին Նժդեհի ղեկավարութեամբ արագ ընթաց թափ կը ստանայ ՀԵԴ ուխտերու հիմնադրումը Միացեալ Նահանգներու եւ Գանատայի բազմաթիւ քաղաքներու մէջ: ՀԵԴ-ի ստեղծման հիմնական նպատակն էր պահպանել ամերիկահայ երիտասարդութեան ազգային ինքնութիւնը, պայքարիլ ուժացման դէմ եւ սերունդներու մէջ վառ պահել Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի գաղափարն ու տեսլականը:

Տասնամեակներու ընթացքին ՀՅԴ Երիտասարդական կառույցը պիտի ծաւալէր իր գործունէութիւնը եւ իր ծիւղերը պիտի արձակէր Միջին Արեւելքի, Եւրոպայի, Ուկրաինայի, Հայաստանի եւ Արցախի մէջ: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարախօսութեամբ տոգորուած երիտասարդներու ամբողջ սերունդը մը պիտի դառնար Լիբանանի եւ Սուրիոյ պատերազմներու ընթացքին հայկական թաղամասերու ինքնապաշտպանութեան պահակազուրկը եւ պիտի ստանձնէր գաղութներու ազգային կառույցներուն ու ժողովուրդին պաշտպանութիւնը: Արցախեան ազատամարտի օրերուն, նոյն սերունդի երիտա-

սարդները պիտի չվարանէին իրենց անձնութիւնը-թեմքը նետուելու պայքարի դաշտ եւ ինքնագոհաբերութիւն յանուն հայրենի հողի ազատագրման:

2020 թուականին Արցախեան պատերազմի ընթացքին, գաղափարապաշտ եւ հայրենապաշտ նոյն սերունդը ռազմաճակատի առաջին գիծին վրայ կատարեց իր առաքելութիւնը եւ ՀՅԴ Երիտասարդականի անդամ զինուորագրեալներ արժանացան նահատակութեան փառաց պատկին:

Հայ ժողովուրդի գերագոյն իղձերը իրականացնելու յանձնառութեամբ, ՀՅԴ Երիտասարդականը Հայ Դատի ու հայութեան իրաւունքներու պաշտպանութեան ի խնդիր թեւակոխած է 90-ամեայ ճանապարհ եւ այդ ընթացքին դարձած է հայութեան նորահաս սերունդի ազգային գաղափարախօսութիւն հաղորդող կազմակերպութիւնը:

Այսօր, երբ շրջափակուած է Արցախը, երբ թշնամին բռնազբաւած է հայրենի տարածքները, երբ վտանգուած է ու ամէնօրեայ սպառնալիքի տակ կը գտնուի Սիւնիքը, ՀՅԴ Երիտասարդական կառույցները պատնէշի վրայ գտնուելու եւ երկարաշունչ պայքարին կուռ շարքերով մասնակցելու պարտաւորութիւն ունին:

Սերունդներու ազգային դաստիարակութիւնը ազգի մը գոյատեւման ապագայի հիմնաքարն է: ՀՅԴ Երիտասարդականը իր կարգին սերունդներ դաստիարակած է, եւ կը շարունակէ դաստիարակել

Դաշնակցական գաղափարախօսութեամբ՝ կեանքի կոչելով մարտունակ ու հայրենասիրութեան գիտակցութեամբ սերունդներ: Ազգային արժանապատուութիւն, ինքնաճանաչողութիւն, առաքելութիւն, արիւթիւն, հայրենասիրութիւն, արդարամտութիւն, կարգապահութիւն. այս արժեքներու ինքնատիրապետման ճանապարհով ՀՅԴ Երիտասարդականը կը շարունակէ իր առաքելութիւնը:

Հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան բնագրի հաղորդիչ ու կենարար ուժը հանդիսացող ՀՅԴ Երիտասարդական կառույցը անհաւասար ազատամարտի մէջ է այսօր: Կորուստէն ետք յուսաբեկութեան ու բարոյալքման թմբիրը թօթափելու եւ պայքարի դաշտ նետուելու պահն է: Կորուստէն ետք մաքառումի աննկուն կամքով տոգորուելու ժամանակն է եւ ապագայ յաղթանակները կերտելու գրաւականը՝ կազմակուռ շարքերով հայրենի Արցախին անմնացորդ նուիրումն է: Դաշնակցութեան անդամագրուած երիտասարդը պարտական է Արցախեան ճակատագրին վրայ նահատակուած բոլոր անձնուրաց հերոսներուն եւ ճակատագրուած է կրելու անոնց կտակած պայքարի խաչվառակերտ վահանը:

Նժդեհէն ժառանգ մնացած հայրենապաշտութեան հոգեկերտուածքով Դաշնակցական երիտասարդութեան դաւանանքը եղած է ու կը մնայ միացեալ եւ անկախ հայրենիքի կերտումն ու վերընձիւղումը:

«Հորիզոն»ի խմբագրական

Փաշինեանի այցը Անգարա թուրք պաշտօնեաներու կողմէ կ'օգտագործուի Սփիւռքը խանգարելու համար

Լուրջ պատճառներ կան, թէ ինչո՞ւ աշխարհի բազմաթիւ հայեր բացասաբար արձագանգեցին վարչապետ Նիկոլ Փաշինեանի անխոհեմ որոշման՝ մասնակցելու Անգարայի մէջ Թուրքիոյ նախագահ Ռեջեօ Թայիփ Էրտողանի երդմնակալութեան արարողութեան, 3 Յունիս 2023-ին:

Նախ եւ առաջ՝ Փաշինեանի յարիւր չէր մասնակցիլ Էրտողանի երդմնակալութեան, յատկապէս որ դեռ 2020 թուականին, Արցախեան պատերազմի ժամանակ, թրքական անօդաչու թռչող սարքեր սպաննած էին հազարաւոր հայ երիտասարդ զինուորներ, եւ Թուրքիա հազարաւոր իսլամ ահաբեկիչներ հաւաքած էր Սուրիայէն՝ Արցախի դէմ կուռելու համար: Աւելի՛ն, Օսմանեան կայսրութիւնը իրականացուցած է 1.5 միլիոն հայերու ցեղասպանութիւնը, գոր թրքական կառավարութիւնը մէկ դար անց եւս տակաւին կը ժխտէ:

Երկրորդ, 2020ի պատերազմէն ի վեր, Թուրքիա եղած է Ատրպէյճանի ռազմական, տնտեսական եւ քաղաքական հաւատարիմ դաշնակիցը: Էրտողան քանի մը անգամ այցելած է Ատրպէյճան եւ Արցախ, որոնց շարքին Շուշի՝ հանդէս գալով հակահայկական յայտարարութիւններով: Տակաւին 13 Յունիսին Արցախ կատարած այցելութեան ժամանակ, Էրտողան յայտարարեց, որ Թուրքիա Շուշիի մէջ հիւպատոսութիւն պիտի բանայ: Բան մը, որ «պատգամ կ'ըլլայ աշխարհի եւ յատկապէս Հայաստանի»: Էրտողան նման այցելութիւն մը կատարած էր 15 Յունիս 2021ին, եւ այդ ընթացքին ան Ալիեւի հետ միասին ստորագրած էր Անգարա-Պաքու միացեալ «Շուշիի հռչակագիրը»: Էրտողան յայտարարեց, որ Թուրքիա կը համագործակցի Ատրպէյճանի հետ «Լեռնային Ղարաբաղի վերականգնման հարցով»: Հայաստանի արտաքին Գործոց նախարարութիւնը դատապարտեց Էրտողանի եւ Ալիեւի այցը Շուշի՝ յայտարարելով, որ «այս սաղբիչ գործողութիւնները պարզորոշ ցոյց կու տան, որ Անգարայի եւ Պաքուի յայտարարութիւնները Հայաստանի եւ հայ ժողովուրդի հետ յարաբերութիւններու կարգաւորման մասին կեղծ են եւ ապակողմնորոշիչ»:

Երրորդ, Հայաստան եւ Թուրքիա վերջին մեկուկէս տարուան ընթացքին քանի մը անգամ հանդիպած են՝ բանալու իրենց ընդհանուր սահմանը «առանց որեւէ նախապայմանի»: Սակայն սահմանը դեռ փակ է, ինչ որ ցոյց կու տայ սահմանը բանալու Թուրքիոյ դժկամութիւնը, եթէ Հայաստան չկատարէ որոշակի նախապայմաններ, ինչպէս՝ Ատրպէյճանի հետ «խաղաղութեան պայմանագիր» ստորագրելը, Հայաստանէն Նախիջեւան «միջանցք» թոյլ տալը եւ Հայոց Յեղաս-

պանութեան թուրք կազմակերպիչներու ոչնչացման ի պատիւ՝ հայ վրիժառուներու նուիրուած երեւանեան յուշարձանի քանդումը: Թուրքիա անմիջապէս արգիլեց իր երկնքին մէջ հայկական թռիչքները եւ սպառնաց հետագայ քայլերով, եթէ նշեալ յուշարձանը չքանդուի:

Չորրորդ, եթէ Փաշինեան բանիմաց խորհրդականներ ունենար եւ լսէր զանոնք, անոնք պիտի առաջարկէին, որ աւելի խելամիտ բան կ'ըլլայ, եթէ Անգարայի երդմնակալութեան արարողութեան զինք ներկայացնէ ուրիշ պաշտօնեայ մը: Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորում մուրալը չի բխիր Հայաստանի շահերէն:

Այսուհանդերձ, վնասը հասցուած է, եւ Թուրք պաշտօնեաները բաւականաչափ խորամանկ են՝ օգտուելու համար Փաշինեանի սխալ քայլին:

Լոս Անճելըսի մէջ Թուրքիոյ գլխաւոր հիւպատոս Սինան Քուզում 6 Յունիսին խորամանկ նամակ մը յղեց Քալիֆորնիոյ նահանգային ժողովի եւ Մերակոյաի անդամներուն՝ արագօրէն օգտուելով 3 Յունիսին Անգարա կատարած Փաշինեանի այցէն՝ վարկաբեկելու համար Քալիֆորնիոյ հայ-ամերիկեան կազմակերպութիւններու լոպիիստական ջանքերը:

Ահա՛ հատուածներ թրքական նամակէն. «Կը գրեմ՝ ձեզի տեղեկացնելու համար հայ-թրքական յարաբերութիւններու դրական զարգացումներուն մասին, քանի որ տեղեկ եմ, որ դուք հետաքրքրուած էք այս հարցով՝ հաշուի առնելով ձեր նախկին յայտարարութիւնները: Անցեալ շաբաթավերջին պատմական պահ նկատուած է հայ-թրքական ժամանակակից յարաբերութիւններու մէջ: 3 Յունիսին, Հայաստանի վարչապետ պարոն Նիկոլ Փաշինեան, ներկայ եղած է Թուրքիոյ նախագահ Ռեջեօ Թայիփ Էրտողանի վերընտրուելէն ետք տեղի ունեցած երդմնակալութեան արարողութեան: Վարչապետին Անգարա կատարած այցելութեան կապուած՝ նախագահ Էրտողան հանդիպած է հայ-թրքական համայնքի նշանաւոր անդամներուն, անոնց շարքին՝ Պուստյ Հայոց Պատրիարք Սահակ Երկրորդ Մաշալեանի հետ: Կը կցեմ այս այցելութեան վերջուած լուսանկար, ուր պարոն Նախագահը կ'երեւի իր հայ գործընկերոջ՝ Պատրիարքին ու հայ-թրքական համայնքի այլ անդամներու հետ»:

Այնուհետեւ թրքական նամակին մէջ կ'ըսուի. «Ես այս կը ներկայացնեմ ձեր ուշադրութեան, որովհետեւ կը գիտակցիմ, որ նման դրական զարգացումներ յաճախ կ'անտեսուին: Փոխարէնը, հոս՝ Լոս Անճելըսի եւ Քալիֆորնիոյ մէջ, կը գերակշռէ իմ երկրին հանդէպ ատելութեան հետորբայնութիւնը: Այս բնելով, ես կը

հրաւիրեմ ձեզ մտածելու, թէ արդեօք այն, ինչ որ ձեզի կ'ընեն որոշ խումբեր հոս՝ Լոս Անճելըսի մէջ, համահունչ է երկու երկիրներու յարաբերութիւններու ներկայ վիճակի իրականութեան, թէ՞ ոչ: Թուրքիոյ եւ Հայաստանի կառավարութիւնները պատմական ջանքեր կը գործադրեն յարաբերութիւնները կարգաւորելու համար: Կը խնդրեմ, աչք մի՛ փակէք այս ջանքերուն վրայ»:

Թուրքիոյ գլխաւոր հիւպատոսը իր նամակը եզրափակած է հետեւեալ խօսքերով. «Ուստի կը խնդրեմ ձեզմէ, որ այս փաստերը հաշուի առնէք ապագային, երբ դուք որեւէ յայտարարութիւն կ'ընէք կամ որոշում կ'ընդունիք հայ-թրքական հարցերու մասին: Այս մօտեցումը շատ աւելի նպաստաւոր կ'ըլլայ հայ եւ Թուրք ժողովուրդներու միջեւ խաղաղութեան հաստատման»:

Ի պատասխան արձագանգելու խնդրանքին՝ Հայաստանի մէջ անանուն բարձրաստիճան պաշտօնեան յայտարարեց. «Կատարեալ պատահապաշտութիւն: Դրական զարգացում ընդհանրապէս չկայ: Բանակցութիւնները դրական ոչ մէկ արդիւնք տուած են»:

Բարեբախտաբար, Թուրքիոյ գլխաւոր հիւպատոսին նամակը շատ քիչ ազդեցութիւն կ'ունենայ Քալիֆորնիոյ օրէնսդիրներուն վրայ: Ան պարզապէս կը գրէ այս նամակը, որպէսզի ցոյց տայ Անգարայի մէջ գտնուող իր մեծաւորներուն, որ աշխատանք մը կը կատարէ: Քալիֆորնիոյ օրէնսդիրները չեն պատրաստուիր օտարերկրեայ դիւանագէտին օճի լեզուով խօսքերը վեր դասել Քալիֆորնիա գտնուող իրենց քաղաքացիներուն փափաքներէն:

Կ'ենթադրենք, որ Ուաշինկթընի մէջ Թուրքիոյ դեսպանը նմանատիպ նամակ յղած է Քոնկրեսի անդամներուն: Աշխարհի տարբեր երկիրներու թուրք դիւանագէտները, հաւանաբար, նոյն բանը ըրած են իրենց երկիրներուն մէջ:

Հայերը չեն կրնար թուրք դիւանագէտները մեղադրել անոր համար, որ անոնք կ'ընեն այն, ինչ որ ձեռնուած է իրենց երկրին, որովհետեւ Հայաստանի վարչապետ Փաշինեան այս հնարաւորութիւնը արձաթէ սկուտեղի վրայ հրամցուցած է Թուրքիոյ...

Յարութ Սասունեան

Արեւելահայերէնի թարգմանեց Ռուզաննա Աւագեան

Արեւմտահայերէնի վերածեց Սեդա Գրիգորեան



ԼՈՒՍԱՎԻՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Զ. ՏԱՐԻ, ԹԻՒ 8, ՅՈՒԼԻՍ 2023



ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԹԱՓՕՐ ԼԵՐԱՆ ՎՐԱՅ

Այլակերպության տօն: Հայ Եկեղեցին նաեւ կ'անուանէ Պայծառակերպության տօն: Տօն մը, ուր կը նշուի Քրիստոսի աստուածայայտնության ու Աստուծոյ Որդի ըլլալու ճշմարտության խորհուրդը:

Քրիստոս Թափօր լերան վրայ երկար լռութենէ յետոյ ինքզինք բացայայտեց իր աշակերտներուն դիմաց: Երեք աշակերտներու՝ Յովհաննէսի, Յակոբոսի եւ Պետրոսի դիմաց ինքզինք բացայայտեց, ցոյց տալու, թէ ինքն է սպասուած Մեսիան, աշխարհի Փրկիչը եւ Աստուծոյ Որդին:

Այս ճշմարտութիւնը հաստատուեցաւ նոյնինքն երկնքի ամպերուն ընդմէջէն լսող ձայնով՝ աստուածային ձայնով, «Այս է իմ սիրելի Որդիս, ոորուն ես հաճեցայ. անոր մտիկ ըրէք» (Մտ 17.5): Լսեցէք Անոր պատգամները, հետեւեցէք իր խօսքերուն, եկած է ձեզի համար, ձեր փրկութեան համար: Եկած է ձեզ առաջնորդելու դէպի լոյս, դէպի կեանք, դէպի յաւիտենական ուրախութիւն:

Քրիստոս իր աշակերտներուն աչքերուն դիմաց պայծառակերպուեցաւ, լոյսով ողողուեցաւ իր ամբողջ դէմքը, լոյսի ճառագայթող ներկայութիւն դարձաւ, որպէս աստուածային լոյս, որպէս աստուածային ճշմարտութիւն: Այդ ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի «սիրելի Որդի» ըլլալու ճշմարտութիւնն էր եւ Աստուծոյ պատուէրը ու պատգամը «անոր մտիկ ըրէք»:

Առաքեալներուն ուղղուած այս պատգամը իրենց ընդմէջէն ամբողջ մարդկութեան ուղղուած պատգամն էր: Պէտք է դառնալ Աստուծոյ, սիրելի գԱտուած, լսել Անոր պատուիրանները, հետեւիլ ու Իր ներկայութեան մէջ ապրիլ եւ պատգամները կեանքի վերածել. երջանիկ ու խաղաղ կեանք ունենալու համար:

Երեք համատեսական աւետարանները այդ մասին կը վկայեն ու նոյնը կը հաստատեն, որ Թափօր լերան վրայ, առաքեալներ իրենց աչքերով ականատես եղան Քրիստոսի աստուածային փառքին ու տեսիլքին յայտնութեան:

Քրիստոսի մկրտութեան ժամանակ դարձեալ աստուածայայտնութիւն տեղի ունեցաւ: Աստուած երկինքէն խօսեցաւ, Որդին մկրտուեցաւ, Սուրբ Հոգին երկինքէն աղանակերպ իջաւ եւ Սուրբ երրորդութեան ներկայութիւնը որպէս ճշմարտութիւն յայտնուեցաւ:

Նոյնը եղաւ նաեւ թափօր լերան վրայ:

Աստուած յայտնեց Իր «սիրելի Որդին»: Սուրբ Հոգին ամպերու ընդմէջէն ծածկեց բոլորը: Որդին այլակերպուեցաւ եւ ինքզինք յայտնեց:

Հայ ժողովուրդը այլակերպության տօնին նաեւ տուած է Վարդավառ անուանումը: Սուրբ Գրիգոր Տաթեւացին վարդի օրինակը կու տայ: Վարդը կոկոն կ'ըլլայ եւ յետոյ կը բացուի եւ իր բուրմունքը կը տարածէ: Քրիստոս ալ որպէս կոկոն պահած էր, չէր բացայայտած իր աստուածութիւնը, բայց հասաւ պահը դարձաւ վարդ ու պայծառակերպուեցաւ ու ինքզինք յայտնեց իր աստուածային փառքով եւ տեսիլքով իր առաքեալներուն ու անոնց ընդմէջէն համայն մարդկութեան:

Ջուրը նաեւ երբ կը սրսկենք իրար վրայ, այր, հին հեթանոսական տօնէն եկող ասանդութիւն մըն է, սակայն Քրիստոնէական նոր իմաստ ստացած է եւ դարձած է մաքրութեան ու սրբութեան խորհրդանիշ: Քրիստոս ինք կը մաքրէ, կը սրբէ եւ կ'ազատագրէ մեզ մեղքէն:

Քրիստոս մշտնջենական լոյսն է, կը լուսաւորուիք եւ խաւարէն հեռու կը մնանք: Քրիստոս Աստուածորդին է, որուն միայն պէտք է լսենք:

Քրիստոս փրկիչն է աշխարհի, որ միայն իրմով կը փրկուիք եւ երջանիկ ու խաղաղ կեանք կ'ապրինք:

Բարձրանանք այսօր թափօր լեր առաքեալներուն հետ միասին, աղօթքով ու անկեղծ իր հետ խօսակցութեամբ տեսնելու, զգալու եւ իրմով մեր կեանքը դէպի լոյս եւ յաւիտենական, մշտնջենական խաղաղութեան առաջնորդելու:

Պէտք է աղօթել, աղօթքով Աստուծոյ հետ խօսիլ եւ մանաւանդ Իր պատուիրանները լսել ու ճանչնալ եւ զանոնք գործադրել ու կեանքի մէջ իմաստաւորել:

Բարգէն Արքեպիսկոպոս

ՈՍԿԵՂԸՆ ՀԱՄԱՐ

«Մօտեցէք անոր, Քրիստոսի, որովհետեւ ինքն է այն կենդանի վէմը, որ թէպէտ մարդոցմէ մերժուած, բայց Աստուծմէ ընտրուած պատուական վէմն է: Այսպիսով դո՛ւք ալ, որպէս կենդանի քարեր, Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք՝ իբրեւ հոգեւոր տաճար. իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ»:

“As you come to him, the living Stone—rejected by humans but chosen by God and precious to him—you also, like living stones, are being built into a spiritual house to be a holy priesthood, offering spiritual sacrifices acceptable to God through Jesus Christ.”

Ա. Պետրոս 2.4-5

1 Peter 2:4-5





ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

ՄԱՐԴՈՒՆ ՀԱՆՂԷՊ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԵՐԸ (ԲԱԺԻՆ Բ.)

«Մարդուն հանդէպ Քրիստոսի ցուցաբերած սիրոյն եւ բարութեան մասին: Եւ կարգ մը հարցումներու պատասխաններ»:

Հարցում.- Ինչպէս կ'ըլլայ, որ Աստուծոյ շնորհքը իրենց մէջ գործող մարդիկ յաճախ կը մեղանշեն:

Պատասխան.- Նոյնիսկ բանաւոր էակները ենթակայ են տատանումի եւ սայթաքումի՝ իրենց իսկ բնութեամբ: Մարդը իր գոռոզութեան ու հպարտութեան պատճառով երբ կը սկսի ուրիշները այպանել՝ «Դուն մեղաւոր ես» ըսելով եւ ինքզինք արդար կը սեպէ, նման մարդոց պարագային Պօղոս առաքեալ կը պատասխանէ. «Որպէսզի չըլլայ որ ունեցած բացառիկ յայտնութիւններով հպարտանամ, Աստուած փուշի պէս ծակող ցաւ մը տուաւ մարմինիս, կարծես սատանային ներկայացուցիչը ըլլար մարմինիս մէջ, որպէսզի անով զիս զգաստացնէ եւ չհպարտանամ» (Բ. Կր 12.7). որովհետեւ նոյնիսկ մաքուր նկարագիրը հակամէտ է պարծենալու եւ հպարտանալու:

Հարցում.- Լոյսին (աստուածային լուսաւորումի) միջոցաւ մարդ կրնայ ինքզինք տեսնել: Որովհետեւ ոմանք կը մերժեն աստուածային յայտնութիւնը եւ կը հաստատեն, թէ տեսիլքը մտքի զօրութեան եւ զգայարանքներու միջոցաւ կու գայ:

Պատասխան.- Միտքը տեսիլքէն կը տարբերի եւ տեսիլքն ալ՝ լուսաւորումէն: Ան՝ որ լուսաւորումը ունի, աւելի մեծ է, քան միտք եւ ճանաչողութիւն ունեցողը: Որովհետեւ ան՝ որ մտքի լուսաւորութիւն ունեցած է, աւելի մեծ է, քան սոսկ գիտութիւն կամ ճանաչողութիւն ունեցողը: Սակայն յայտնութիւնը տեսիլքէն շատ աւելի բարձր է, քանի որ հզօր Աստուծոյ խորհուրդները յայտնութեան եւ ներշնչման միջոցաւ կը յայտնուին հոգիին:

Հարցում.- Արդե՞ծք միտքը բան մըն է եւ հոգին ալ՝ ուրիշ:

Պատասխան.- Ինչպէս որ մարմինը բազմաթիւ անդամներ ունի, բայց անոնց ամբողջութիւնը մարդ կը կոչուի, այդպէս ալ հոգին բազմաթիւ անդամներ ունի, որոնք են.- միտքը, խիղճը, կամքը եւ մտածումները, որոնք ի մի կապուած են մէկ անձի մէջ: Ճիշդ է, որ կան բազմաթիւ անդամներ, բայց անձը՝ ներքին մարդը մէկ է: Ինչպէս որ արտաքին աչքը իր առջեւ գտնուող երեւոյթները կը յայտնէ, ինչպէս օրինակ՝ փուշերը, անդունդներն ու փոսերը, եւ նախապէս կ'ազդարարէ անձը, այդպէս ալ միտքը, երբ արթուն եւ զգաստ է՝ կը յայտնաբերէ հակառակորդին թակարդներն ու խաբէութիւնները եւ կանխաւ կը զօրացնէ ու կը պատրաստէ հոգին: Ըստ էութեան, միտքը հոգիին աչքն է:

Մեծն Սուրբ Սակար

ՍԱՄՈՒԷԼ ՄԱՐԳԱՐԵՆ

Աստուած իրայելացիներուն յաճախ կը խօսէր իմաստուն մարդոց եւ կանանց միջոցով: Անոնք մարգարէներ կը կոչուէին: Մարգարէները պէտք էր նախագգուցանէին իրայելացիները, երբ անոնք չէին կատարեր Աստուծոյ կամքը, անոնք նաեւ կը մխթարէին ժողովուրդը, երբ անոնք դժուար պահեր կ'ապրէին:

Այդ մարգարէներէն մէկը Սամուէլն էր, որ իր ծննդեան պահէն իսկ նուիրուեցաւ Աստուծոյ ծառայելու: Եփրեմի ցեղի լեռնային շրջանին մէջ մարդ մը կ'ապրէր, որուն անունը Եղկանա էր, անոր կինը՝ Աննան, երկար ժամանակ կը ցանկար զաւակ ունենալ, բայց չէր կրնար: Ամէն տարի Աննան ու Եղկանան Սելովի տաճար կ'երթային, ուր Աննան լալով եւ պաղատագին կ'աղօթէր Աստուծոյ և կ'ըսէր.

- Տէր, եթէ ինձի որդի մը տաս, կը խոստանամ զայն քեզի նուիրել, անկախ իր ամբողջ կեանքի ընթացքին քեզի թող ծառայէ:

Սելովի տաճարի քահանան Հեղին էր, որ երբ լսեց, թէ ինչու համար Աննան կու լայ, ըսաւ իրեն.

- Մի նեղուիր եւ տուն գնա: Իսրայէլի Աստուածը քեզի պիտի տայ ինչ որ իրմէ խնդրեցիր:

Այդպէս էլ եղաւ: Աննան որդի մը ունեցաւ եւ զայն Սամուէլ կոչեց, որ կը նշանակէ «Աստուած կը լսէ»: Աննան իր խոստումը պահեց եւ իր որդին իրեն հետ տաճար տանելով յանձնեց Հեղի քահանային: Սամուէլը մնաց Սելովի մէջ. Հեղին անոր սորվեցուց ամէն ինչ որ պէտք էր քահանայ դառնալու համար: Ամէն տարի մայրը իրեն համար քահանայի փոքրիկ պատմուճան կը պատրաստէր եւ Սելով կը բերէր:

Գիշեր մը, երբ Սամուէլը քունի մէջ էր, Աստուած կանչեց զինք.

- Սամուէլ:

Սամուէլը արթնցաւ, վազեց Հեղիի մօտ և ըսաւ.

- Զի՞ն կանչեցիր. այստեղ եմ:

Հեղին պատասխանեց.

- Զաւակս, քեզ չկանչեցի, գնա՛ քնացիր:

Սամուէլը դարձեալ ձայն տուաւ Սամուէլին, որ արթնալով գնաց Հեղիի մօտ:

- Զի՞ն կանչեցիր. այստեղ եմ:

Հեղին պատասխանեց.

- Զաւակս, քեզ չկանչեցի, գնա՛ քնացիր:

Սամուէլը երրորդ անգամ կանչեց Սամուէլը, եւ ան ոտքի ելաւ, գնաց Հեղիի մօտ և ըսաւ.

- Զի՞ն կանչեցիր. այստեղ եմ:

Հեղին հասկցաւ, որ պատանին հետ Աստուած է որ կը խօսի:

- Գնա՛, քնացիր, և եթէ կրկին այդ ձայնը քեզ կանչէ, այսպէս պատասխանէ.

«Խօսէ, Տէր, ծառայ կը լսէ»:

Սամուէլը գնաց իր անկիւնը՝ քնանալու: Աստուած եկաւ և կանչեց զինք.

- Սամուէլ, Սամուէլ:

Սամուէլը պատասխանեց.

- Խօսէ՛, Տէր, ծառայ կը լսէ:

Այդ օրուրնէ Աստուած անընդհատ կը խօսէր Սամուէլի հետ: Եւ երբ ան մեծցաւ, մարգարէ դարձաւ, որուն ամբողջ ժողովուրդը ուշադրութեամբ կը լսէր:

ՊԱՏԱՆԻՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

BEING CHILDLIKE

“Except ye be converted and become as little children, ye shall not enter into the Kingdom of Heaven.” (Matthew 18:3)

To me, this passage of Jesus' from the New Testament speaks to the process of forgetting about our bodies as our primary identity – forgetting about our ethnic identity, our spoken language, our cultural label, the shape of our eyes, or what side of the border we grew up on, then making the conversion to become as little children, who are impervious to such compartmentalizing. Jesus was not saying we should be childish and become immature, undisciplined, and uneducated. Instead, he was referring to being childlike, which is nonjudgmental, loving, accepting, and incapable of placing labels on anyone or anything.

When we are able to be as little children, we realize that in every adult there is a child who desperately wants to be known. It is the child who is full and the adult who is usually empty. The fullness of the child is evident in peace, love, nonjudgment, and allowing. The emptiness of the adult reveals itself in fear, anxiety, prejudice, and fighting. Enlightenment can be seen as a process of remembering that in the heart of a little child there is purity, and it is this pure divine love and acceptance that is the ticket to the kingdom of heaven. Make it one of your goals in life to be more childlike in everything you do.

The quality that we see in geniuses is equivalent to the inquisitiveness of children. Geniuses and children share a willingness to explore without thoughts of failure or worries about criticism. I think the key word in this passage of Jesus' is “converted”. We are being told to become something that is perfect, kind, loving, and above all eternal. It resides in each of us, and it convert to. That naïve but imaginative mystic who is naturally spiritual is the child we want to convert to. When we do, we become childlike and leave behind our childish adult ways, which are the ways that prevent us from entering the eternal kingdom of heaven.

That kingdom is available to you here now on earth, as it is in heaven. All you have to do is make that conversion. To do so:

Spend as much time as you can manage observing little children. As you do, recall the child in you who would love to play with them. The ancient thinker Heraclitus once said, “Man is most nearly himself when he achieves the seriousness of a child at play.” Be more childlike, playful, loving, and inquisitive as you make your conversion to the kingdom of heaven.

When you find yourself acting serious and stodgy, remind yourself of the invisible observer inside you that is noticing your somber side. Is that observer grim as well? You'll quickly see that your childlike witness cannot be at all like what it is witnessing. Then vow to make the immediate conversion.

Make the decision that “I am never going to let an old person inhabit my body.” Your body may indeed be rented by an aging being, but that eternal, invisible observer who is noticing it all will stay childlike, innocent, and ready to enter the kingdom of heaven at the appointed time with such an attitude firmly in place.

**WISDOM OF THE AGES
WAYNE W. DYER**





Ջարագովական 7

Աստուածաշունչը Հիմք Մեր Եկեղեցական Առաքելութեան և Ազգակերտումի

Խօսիլ Հայ Եկեղեցւոյ առաքելութեան մասին, առանց անդրադառնալու Աստուածաշունչին՝ անհնար է եւ հիմնագուրկ: Մեր եկեղեցւոյ ամբողջ աստուածաբանութիւնը, ծէսը, դասանքը եւ մինչեւ իսկ պատմութիւնը՝ Աստուածաշունչը կեանքով թարգմանելու վկայութիւններ են: Ոչ միայն այս, այլ՝ Աստուածաշունչ Սուրբ Գիրքը լեցուն է ազգաշինութեան եւ հայրենակերտման օրինակներով:

Արդարեւ, Աստուածաշունչին ընդմէջէն մենք կը տեսնենք, թէ՛ մարդոց հոգիներու փրկութեան իր ծրագիրը Աստուած իրականացուց կազմաւորելով ժողովուրդ մը՝ ստրկացած եւ թափառական Եբրայեցիներէն, զանոնք դուրս բերելով Եգիպտոսի մէջ աւելի քան 400 տարիներու գերութենէն, տանելով զանոնք անապատ, Օրէնքներ տալով անոնց, պաշտամունքային կեանքը կազմակերպելով, որմէ ետք միայն՝ զանոնք հասցնելով Խոստացուած Երկիր, ուր պիտի ապրէին ու գործէին Աստուածային պատուիրաններով. ինչ որ ջաջողեցան ընել և կորսնցուցին Դաւիթի աթոռը, իրենց թագաւորութիւնը:

Ազգերու ինքնութեան եւ իրայատկութեան մասին օրինակներ կը գտնենք Աստուածաշունչի առաջին գիրքէն մինչեւ վերջին գիրքը, Ծննդոց գիրքի մէջ յիշուած Բաբելոնի աշտարականշինութեան դրուագէն մինչեւ Հոգեգալստեան Պենտեկոստի դրուագը, աւարտելով Յայտնութեան գիրքով:

Բաբելոնի աշտարակաշինութեան դրուագին ընդմէջէն, մենք կը տեսնենք թէ՛ Աստուած ինք կը յառաջացնէ ազգերը եւ կը կամենայ, որ անոնք ըլլան ազատ եւ ինքնուրոյն: Դրուագը կը պատմէ, թէ՛ Աստուած ինչպէս «խառնեց լեզուները», եւ մարդիկ սկսան իրար չհասկնալ, ինչ որ պատճառ պիտի դառնար Բաբելոնի բռնատիրութեան անկման: Եւ ինչո՞ւ լեզուներու այդ «յեղափոխութիւնը». որովհետեւ, լեզուի մէջ առկայ է խօսքի զօրութիւնը, որ ամէն գէնքէ աւելի հզօր է: «Լեզու» հասկացողութեան մէջ գոյութիւն ունի՝ լեզուամտածողութիւն, մտածելու եւ տրամաբանելու իրապատուկ կերպ, մտքի ճկունութիւն եւ ճոխութիւն, լեզուն մարդիկը կը դարձնէ հաղորդական էակներ եւ անոնց կու տայ ինքնուրոյն նկարագիր եւ ազատ արտայայտութեան վայելքը:

Բաբելոնէն հազարմեակներ ետք, Հոգեգալստեան Պենտեկոստի օրը, Աստուծոյ շնորհաբաշխ Հոգին լեզուներու գիտութեամբ կ'օժտէ առաքելները, որպէսզի երթան եւ Քրիստոսի Աւետարանը հասցնեն բոլոր ազգերուն, իրաքանչիւրին իր լեզուով:

Յայտնութեան գիրքին մէջ կը տեսնենք ազգեր ու ժողովուրդներ կանգնած Աստուծոյ գահին դիմաց, զայն կ'օրհնաբանեն եւ անոր արդարութիւնը կը հռչակեն:

Ափիռքացած ժողովուրդի մը վերականգնումի եւ վերակազմակերպման սրտառուց օրինակներու կը հանդիպինք Հին Կտակարանի Եզրասի եւ Նեհէմիայի գիրքերուն մէջ, որոնք Բաբելոնի գերեզարծէն ետք, Զորաբաբելին հետ միասին, կը լծուին տաճարաշինութեան, Երուսաղէմի վերականգման, Աստուածաշունչի եւ եբրայերէն լեզուի վերուսուցման նուիրական աշխատանքին, այսպիսով՝ միատրելով ազգը իրենց կրօնական եւ ազգային արժէքներուն եւ ասանդութիւններուն շուրջ:

Մեր եկեղեցական կեանքի առաքելութեան հիմքն է Աստուածաշունչը:

- Կ'երգենք Աստուածաշունչը շարականներով:
- Կը դասնինք Աստուածաշունչը, ամէն Կիրակի, «Հաւատամք»ը արտասանելով:
- Կ'աղօթենք Աստուածաշունչը Նարեկացիով:
- Կ'ուսուցանենք Աստուածաշունչը քարոզով:
- Կը պատմենք Աստուածաշունչը սուրբ եւ անմահ Պատարագով:
- Կը պատկերենք Աստուածաշունչը մանրանկարներով:
- Կը մարմնաւորենք Աստուածաշունչը մեր եկեղեցական ճարտարապետութեամբ, իր խաչածե կառոյցով եւ առաքելախիմն 12 սիւներով:
- Կը յիշենք ու կը յիշեցնենք Աստուածաշունչը՝ աշխարհատարած հաջբարերով, Քրիստոսի լուս բայց խօսուն վկաներով:
- Մեր Հաւատամքը, մեր շարականները, մեր Նարեկացին, մեր պատարագներն ու քարոզները, մեր եկեղեցիներն ու խաչքարերն ու մանրանկարները, բոլորն ալ ծնունդն ու վկան են Աստուածաշունչին:

Լսենք Պարոյր Սեակի հետեւեալ վկայութիւնը.- «Նա ով չի կարողացել Աստուածաշունչը, չի կարող իսկական իմաստով գրագետ մարդ կոչվել[...]: Ամբողջ համաշխարհային գրականությունը դուրս է եկել Աստուածաշունչից, այստեղ է բոլոր ժանրերի և սյուժեների սկիզբը: Նրա հիման վրա են ստեղծվել համաշխարհային գրականության ու արվեստի գլուխգործոցները: Վկա՝ Աստվածային կատակերգությունը, Նարեկը, Ռաֆայելը [...]: Արդեն միայն Աստվածաշունչի թարգմանությամբ հայոց լեզուն կատարեց իր փառատունը՝ ապացուցելով, որ ի գորու է լիապես արտահայտելու ինչպէս պատմութիւն, այնպէս էլ օրենսդրութիւն, ինչպէս հրապարակախոսութիւն, այնպէս էլ բանաստեղծութիւն, ինչպէս բուսական ու կենդանական աշխարհ, այնպէս էլ երկակայութիւն-տեսիլք եւ կանխատեսութիւն մարգարեութիւն, որովհետեւ հին եբրայեցոց «Սուրբ գիրքը» իսկապէս մի Ամենամատյան էր գիտութեան և արվեստի բազում բնագավառների»:

Այս բոլորէն ետք, ինչպէ՞ս չկարողալ, չճաննալ ու չսիրել՝ Մաշտոցներ ծնած, Վարդաններ գօտեպնդած, Նարեկներ ներշնչած, Ծնորհայիններ պսակած, մեր ազգին Կոմիտասներ պարգեւած, երագ ու տեսիլք յայտնող, քաջութիւն ու սէր ջամբող, առաքիտութիւն եւ ներողամտութիւն ուսուցանող, հողեղէնէն եւ երկրայինէն վեր բարձրացնող եւ հոգեղէնի ու երկնայինի պաշտամունքին հրափրող, ազգը միաւորող եւ զայն ուրոյն մշակոյթով շնորհագարողը, Հայ Եկեղեցւոյ աւելի քան 1700 տարիներու ազգանուէր առաքելութեան հիմքը հանդիսացող՝ հրաշագործ Աստուածաշունչը:

Հայր Գեղարք

3.9. եթէ հարցումներ ունիք, գրեցէք մեզի:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ

Հայոց եւ այլ ազգերու գիրերու ստեղծող, գինուորական, լուսատրիչ, մշակութային-հասարակական գործիչ, քրիստոնէութեան քարոզիչ, հայ եկեղեցւոյ վարդապետ՝ Մեսրոպ Մաշտոց, եղած է հայ գրչութեան ու հայ դպրութեան, հայագիր դպրոցի հիմնադիրն ու հայերէնի առաջին ուսուցիչը, թարգմանական գրականութեան, հոգետր երաժշտութեան սկզբնաւորողը եւ հայ մանկավարժութեան հիմնադիրը:

Մաշտոց անունը ունի եկեղեցական եւ աշխարհիկ տարբեր իմաստներ, առաջին իմաստով կը նշանակէ ծիսարան, ժողովածու աղօթագիրք, որ կ'ընդգրկէ հայոց եկեղեցւոյ զանազան ծէսերու կարգն ու համապատասխան աղօթքները:

Ազնուական ընտանիքի զաւակ Մեսրոպ Մաշտոց ծնած է մօտ 362 թուականին, Տաթև գաւառի Հագեկաց գիւղի մէջ: Հայաստանի մէջ ստացած է յունական կրթութիւն, տիրապետած է՝ յունարէն, պարսկերէն, ասորերէն եւ վրացերէն լեզուներուն:

Մօտ 389 թուականին, Մեսրոպ Մաշտոց հաստատուած է Վաղարշապատի մէջ եւ եղած արքունիքի ատենադպիր, ապա անցած գինուորական ծառայութեան, իսկ 394-ին դարձած է վանական:

Մաշտոցի կարեւոր առաքելութիւններէն մէկը եղած է Քրիստոնէութեան քարոզչութիւնը, զոր կատարած է իր աշակերտներու ուղեկցութեամբ՝ քարոզչական շրջագայութիւններով: Այդ առաքելութեան ընթացքին՝ Մեսրոպ Մաշտոց լրջօրէն մտահոգուած է երկրի վիճակով, գիտակցած լեզուի, եկեղեցւոյ, դպրոցի, ասանդութեան եւ մշակոյթի կարեւորութիւնը ժողովուրդի իքնութեան պահպանման գործին մէջ:

Գողթն գաւառի մէջ, ուր կը պահպանուէր հեթանոսական կրօնը, Մաշտոց հիմնած է քրիստոնէական համայնքներ, եկեղեցական դասեր, քրիստոնէութիւնը քարոզած է՝ Աստուածաշունչը հրապարակաւ կարդալու ընթացքին, զայն անմիջապէս հայերէն թարգմանելով, այդպիսով Աստուծոյ խօսքը ժողովուրդին հասկնալի դարձնելու համար, սակայն ան նկատած է, որ այնուամենայնիւ ժողովուրդը կը ծուլուի, կ'ոչնչանայ՝ սեփական գիր չունենալու պատճառով: Ուստի կը ծրագրէ ստեղծել հայոց այբուբենը՝ հայացնելու Աստուածաշունչը եւ քրիստոնէական այլ գիրքեր, որպէսզի եկեղեցիներու մէջ քարոզչութիւնն ու արարողութիւնները կատարուին հայերէն:

Թէեւ քրիստոնէութիւնը Հայաստան մուտք գործած էր առաջին դարուն եւ 301 թուականին դարձած էր պետական կրօն, բայց ժողովուրդի զգալի մասը միայն անուանապէս քրիստոնէայ էր, երկրի մէջ եղած Աստուածաշունչի գիրքերը, եկեղեցական այլ երկեր յունարէն կամ ասորերէն էին, ժամերգութիւնները եւ ծէսերը կը կատարուէին ժողովուրդի համար անհասկնալի այդ լեզուներով:

395 թուականին Հայաստանը բաժնուած էր Բիւզանդիոնի եւ Պարսկաստանի միջեւ: Հայաստանի պարսկական հաստածին մէջ հետզհետէ կը հզօրանար պարսկերէնի ազդեցութիւնը, իսկ բիւզանդական մասին մէջ՝ յունարէնը դարձած էր պետական լեզու:

Հայ ժողովուրդը ձուլման վտանգէն փրկելու նպատակով՝ Մաշտոց կազմեց հրատապ ծրագիր.- հայերէն թարգմանել քրիստոնէական գիրքերը, քարոզչութիւնն ու արարողութիւնները կատարել հայերէնով, ստեղծել ինքնուրոյն հայերէն գրականութիւն, ամրացնել երկրի 2 մասին բաժնուած հաստուածներուն հոգետր, լեզուական եւ մշակութային միասնութիւնը, որ քաղաքական միասնութեան հիմք պիտի դառնար՝ երկրի պետական անկախութիւնը վերականգնելու հնարաւորութեան պարագային:

Մաշտոցի այս ծրագիրը ընդունեցին ու խրախուսեցին Հայոց կաթողիկոս Սահակ Պարթեւն ու Վառմշապուի արքան: Մեսրոպ Մաշտոց, տեղեակ ըլլալով, որ Ասորիքի մէջ Դանիէլ անունով եպիսկոպոսի մօտ հայերէն նշանագրեր կան, պալատական մը ուղարկեց զանոնք բերելու: Ան որոշ ժամանակ, այդ տառերով հայոց լեզու ուսուցանելէ ետք, պարզեց, որ նշանագրերը բաւարար չափով չեն համապատասխաներ հայերէնի հնչիւնական համակարգին: Սահակ Պարթեւի երաշխատրութեամբ եւ Վառմշապուի արքայի հրամանով՝ Մաշտոց իր խումբ մը աշակերտներուն հետ ուղեւորուեցաւ Ասորիք,

հայոց գիրի մասին ասորի հոգետրականներու հետ խորհրդակցելու: Բայց, ջախկցութիւն չստանալով, ինք ձեռնամուխ եղաւ այդ գործին:

Մաշտոցի կենսագիր Կորինի վկայութեամբ՝ 405թ.-ին Եղեշիոյ մէջ «ան իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր ու սքանչելի ծնունդներ՝ հայերէն լեզուի նշանագրեր»: 406 թուականին՝ նորաստեղծ գիրերով՝ Մաշտոցը վերադարձաւ Հայաստան: Զինք մեծ ցնծութեամբ դիմաւորեցին Վաղարշապատ (ներկայիս՝ Էջմիածին) մայրաքաղաքին մէջ:

Գիրերու ստեղծումէն ետք, Մաշտոց անմիջապէս իր աշակերտներուն հետ շրջագայեցաւ Հայաստանով մէկ ու հիմնեց դպրոցներ ու վանքեր, բացաւ գրչութեան ու գիտութեան բազմաթիւ կեդրոններ: Իր աշակերտներուն հետ միասին Մաշտոց գնաց նաեւ Վրաստան, ուր Կորինի վկայութեամբ, ստեղծեց նաեւ վրացական այբուբենը:

Գիրերու գիտէն ետք, Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթեւի առաջին գործը եղաւ Աստուածաշունչի թարգմանութիւնը: Ժամանակի հմուտ եւ բանիմաց հայ թարգմանիչ-վարդապետները ասորական բնագրէն թարգմանեցին, ապա՝ յունական բնագրին հետ համեմատեցին Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնը, զոր իր բացառիկութեան շնորհիւ անուանեցին «թարգմանութիւններու թագուհի»: Հայերէն թարգմանուած առաջին նախադասութիւնը Աստուածաշունչի Սողոմոնի առակներէն էր. «Ճանաչել գիմաստութիւն եւ գխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Յունարենէն թարգմանուեցաւ ոչ միայն Աստուածաշունչը, այլեւ՝ յոյն եւ ասորի հեղինակներու բազմաթիւ հայրախօսական, իմաստասիրական, պատմագիտական եւ այլ բնոյթի աշխատութիւններ:

Շարունակելով թարգմանական աշխատանքը՝ Ս. Մեսրոպ Մաշտոց ու Ս. Սահակ Պարթեւ հայրապետ կազմեցին Հայ Եկեղեցւոյ Խ ո Ր Ի Ր Գ ա տ ե տ Ր - Պ ա տ Ր ա գ ա մ ա տ ո յ ց Ի , ժամագրիչի նախնական տարբերակները:

Բացի թարգմանական գործերէն՝ Մեսրոպ Մաշտոց գրած է մայրենի լեզուով առաջին հոգետր բանաստեղծութիւններն ու երգերը՝ ղնելով հոգետր երգեցողութեան հիմնաքարը, նաեւ ճառեր, քնարական բանաստեղծութիւններ, քարոզներ եւ ուղերձներ: Մաշտոցի ու անոր աշակերտներու գործունէութեամբ սկզբնաւորուած է հայոց ոսկեդարի (Ե. դար) վիթխարի գրական-մշակութային շարժումը:

Մեզի հասած են Մաշտոցի գրիչին պատկանող բազմաթիւ շարականներ ու հոգետր երգեր, քարոզներ, ճառեր, թարգմանական եւ խմբագրական շարք մը երկեր: Շարականագիրերու միջնադարեան ցուցակներու հեղինակները Մաշտոցին կը վերագրեն «Ապաշխարութեան» կարգի մօտ 130 շարականներ ու երգեր, ինչպէս «Անկանխմ առաջի քո», «Օ՜վ վեցաղոյս», «Հայր բազումողորմ» եւ այլ բազմաթիւ շարականներ ու երգեր, որոնք հայ հոգետր երգարուեստի առաջին հայատառ չափածոյ նմուշներն են:

«Հայր բազումողորմ,
խոստովանիմ առ քեզ,
Որպէս զանառակ որդին,
Թ՛ող ինձ զմեզս իմ եւ ողորմես:

Տէր,
Որ գթացար ի կինն քանանացի,
գթաւ եւ յիս՝ ի մեղաւորս,
եւ ողորմես:

Տէր,
Որ դարձուցեր զմաքսաւորն
Ի գիտութիւն ճշմարտութեան,
Դարձո՛ւ եւ զիս՝ զմղորեալս, եւ ողորմես:

Աստուած բազումողորմ
խնայեա՛ յարարածս քո,
Հայր ամենակալ, եւ ողորմես:

Արեգակն արդարութեան,
ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս
ճշմարտութեան եւ ողորմես:

Տո՛ւր մեզ, Տէր, գխաղաղութիւն
եւ փրկեա՛ ի նեղաց մերոց,
Հոգիդ ճշմարտութեան, եւ ողորմես»:

Նայիրի Մկրտիչեան
(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 1)





ԱՂՈԹՔ ԶՕՐԱԽՈՐ՝ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻ

Տէր, տես տառապանքս եւ բազմամեղիս հոգիին ցաւերը: Դարձիր ինձի ու ներէ, եւ զիս քեզի առաջնորդէ, Դուն որ ըսիր. «Դարձէք ինձի, եւ ես կը դառնամ ձեզի»:

Ողորմէ լքեալիս, օգնէ եղկելիիս, ճառագայթ խաւարածիս վրայ: Առաջնորդէ մտորեալս, որ մեղքերով եւ անթիւ յանցանքներով ծածկուած՝ անօրէնութեան ալիքներուն մէջ տարութեան լուրով կը ծփամ, եւ քեզի կ'ապաւինիմ:

Ինչպէս Պետրոսին՝ ձեռք երկարէ նաեւ ինձի: Մաքսատրին նման կը խնդրեմ, արդարացուր զիս: Ասազակին նման ջնջէ յանցանքներս: Իմ առջեւ ալ բաց կեանքի ճանապարհի դուռը, եւ զիս մտցուր արքայական առաքատը:

«Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան», փրկէ զիս՝ թակադրուածս, որ մեղքի ծովուն խորերը ընկղմած եմ: Ազատէ եւ զօրացուր զիս, որպէսզի կամըդ կատարեմ, եւ գիշեր-ցերեկ անդադար՝ լամ ու սգամ անօրէնութեանս եւ ծովութեանս համար:

Կենդանութեան եւ անմահութեան Աղբիւր, առատահոս Քու վտակդ խմցուր ծարաւ հոգիիս՝ որ բազմաթիւ անօրէն գործերուս պատճառաւ պապակած՝ կը տոչորիմ: Կակուցուր քարացած սիրտս, եւ ապաշխարութեան արցունք հոսեցուր:

Բարութեանց գանձ՝ Քրիստոս, Քու առատ բարիքներդ դառնեալիս մը չափ շնորհէ ինձի, որ սաստիկ աղքատ եմ ու անօթի: Մերկութիւնս ծածկէ, եւ ապաշխարութեան արցունքով զիս կերակրէ:

Ճշմարիտ լոյս Քրիստոս՝ որ կը լուսատրես բոլոր մարդիկը, լուսատրէ մեղքերով խաւարածս: Բաց աչքերը սրտիս, եւ երկիրդդ ու պատուիրաններու սիրոյդ մէջ հաստատէ զիս. ամէն:

ՏՕՆԱՅՈՅՑ - ՅՈՒԼԻՍ

- Շբթ. 1 Յուլիս – Տօն սրբոցն՝ Տրդատայ թագաւորին մերոյ եւ Աշխինի տիկնոջն եւ Խոսրովիդիտոյն:
- Կիր. 2 Յուլիս – Տօն Սուրբ Աստուածածնի Տփոյ գամանն:
- Բշ. 3 Յուլիս – Տօն սրբոցն՝ Կալիստրատոսի, եւ քառասուն եւ ինն վկայիցն, եւ Ղունկիանոսի քահանային:
- Գշ. 4 Յուլիս – Տօն սրբոյն Ջաքարիայ մարգարէին:
- Դշ. 5 Յուլիս – Պահք:
- Եշ. 6 Յուլիս – Տօն սրբոյն Եղիսէի մարգարէին:
- Ուրբ. 7 Յուլիս – Պահք:
- Շբթ. 8 Յուլիս – Տօն սրբոց եկոտասան առաքելոցն Քրիստոսի. եւ սրբոյն Պողոսի երեքտասաներորդ առաքելոյն:
- Կիր. 9 Յուլիս – Բարեկենդան Պայծառակերպութեան Պահոց:
- Բշ. 10 Յուլիս – Ա. օր Պայծառակերպութեան Պահոց:
- Գշ. 11 Յուլիս – Բ. օր Պայծառակերպութեան Պահոց:
- Դշ. 12 Յուլիս – Գ. օր Պայծառակերպութեան Պահոց:
- Եշ. 13 Յուլիս – Դ. օր Պայծառակերպութեան Պահոց:
- Ուրբ. 14 Յուլիս – Ե. օր Պայծառակերպութեան Պահոց:
- Շբթ. 15 Յուլիս – Յիշատակ Տապանակին հնոյ եւ տօն նորոյս Եկեղեցոյ:
- Կիր. 16 Յուլիս – Տօն Պայծառակերպութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի:
- Բշ. 17 Յուլիս – Յիշատակ Մեռելոց:
- Գշ. 18 Յուլիս – Գ. օր Պայծառակերպութեան:
- Դշ. 19 Յուլիս – Պահք:
- Եշ. 20 Յուլիս – Տօն սրբոյն Եսայեայ մարգարէին:
- Ուրբ. 21 Յուլիս – Պահք:
- Շբթ. 22 Յուլիս – Տօն սրբոցն՝ Թադէոսի առաքելոյն մերոյ, եւ Սանդիսոյ կուսին:
- Կիր. 23 Յուլիս – Բ. գկնի Պայծառակերպութեան:
- Բշ. 24 Յուլիս – Տօն սրբոցն՝ Կիպրիանոսի եպիսկոպոսին, եւ քառասուն եւ հինգ հայ վկայիցն որք նահատակեցան ի Նիկոպոլիս քաղաք Փոքուն Հայոց եւ կուսանացն՝ Յուստիանայ, Եպիմեայ, եւ Քրիստինայ:
- Գշ. 25 Յուլիս – Տօն սրբոցն՝ Աթանասիոսի եպիսկոպոսին, եւ տասն աշակերտացն, եւ հինգ վկայիցն:
- Դշ. 26 Յուլիս – Պահք:
- Եշ. 27 Յուլիս – Տօն սրոց նախահարցն՝ Աղամայ, հաբիլի, Սեթայ, Ենովայ, Ենովբայ, Լոյի, Մեքիսեղեկի, Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ, Յովսէփայ, Մովսիսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամիսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեղեղնի, եւ այլոց սրբոց նախահարցն:
- Ուրբ. 28 Յուլիս – Պահք:
- Շբթ. 29 Յուլիս – Տօն սրբոցն եւ թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ՝ Արիստակիսի, Կրթանիսի, Յուսկաննի, Գրիգորիսի եւ Դանիէլի:
- Կիր. 30 Յուլիս – Գ. գկնի Պայծառակերպութեան:
- Բշ. 31 Յուլիս – Տօն սրբոց մակարայեցոցն՝ Եղիազարու քահանային, եւ Շամունայ, եւ եօթն որդոց նորին:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԱՆԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- **Որո՞նք են անտարանական գլխաւոր պատուիրանները:**
Անտարանի գլխաւոր պատուիրաններն են՝ սէր, խոնարհութիւն, համբերութիւն եւ ներողութիւն:
- **Որո՞նք են առաքինի գործերը:**
Առաքինի գործերը երկու մասի կը բաժնուին՝ հոգեւոր եւ մարմնաւոր:
- **Ինչ են հոգեւոր առաքինի գործերը:**
Եօթը հատ են հոգեւոր առաքինի գործերը.-
1. Տգէտներուն սորվեցնել,
2. Գէշ ընթացքի մէջ եղողները խրատել,
3. Խորհուրդի կարիքը ունեցողներուն խորհուրդ տալ,
4. Ուրիշներու թերութիւններուն դիմաց համբերատար ըլլալ,
5. Ներողամիտ ըլլալ,
6. Վշտացեալներուն մխիթարել,
7. Կենդանիներուն ու մեռելներուն, եւ նոյնիսկ մեր թշնամիներուն համար աղօթել:
- **Որո՞նք են մարմնաւոր առաքինի գործերը:**
Մարմնաւոր առաքինի գործերը եօթը հատ են՝
1. Անօթիին՝ հաց եւ ծարաւին ջուր տալ,
2. Պանդուխտները հիւրասիրել,
3. Մերկերու զգեստ հագցնել,
4. Հինադներուն այցելել,
5. Բանտարկեալներուն այցի երթալ,
6. Գերիները ազատել,
7. Անտէր մեռելները թաղել:
- **Քանի՞ հատ են բարոյական առաքինութիւնները:**
Բարոյական առաքինութիւնները չորս հատ են՝ խոհեմութիւն, արիութիւն, արդարութիւն եւ ժովկալութիւն:
- **Ինչ խոստացաւ Քրիստոս իր պատուիրանները պահողին:**
Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս խոստացաւ, որ թէ՛ այս աշխարհին եւ թէ՛ հանդերձեալին մէջ յափտենակաւ երանութիւն պարգեւել անոնց, որոնք իր պատուիրանները պահեցին ու առաքինի կեանք մը ապրեցան:
- **Ինչպէ՞ս խոստացաւ այս բոլորը:**
Հետեւեալ ինը երանութիւններով, որոնք գրուած են Մատթէոսի Անտարանի հինգերորդ գլխուն մէջ.-
1. «Երանի՛ք հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:
2. Երանի՛ք սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ մխիթարութիւն պիտի գտնեն:
3. Երանի՛ք հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը:
4. Երանի՛ք անոնց, որոնք արդարութեան քաղցն ու ծարաւը ունին, որովհետեւ անոնք պիտի յագեցան:
5. Երանի՛ք ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնեն:
6. Երանի՛ք անոնց, որոնք սիրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուծմ պիտի տեսնեն:
7. Երանի՛ք անոնց, որոնք խաղաղութեան հաստատումին համար կ'աշխատին, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիները պիտի կոչուին:
8. Երանի՛ք անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:
9. Երանի՛ք ձեզի, երբ մարդիկ նախատեն եւ հալածեն ձեզ, կամ ստելով՝ ձեր մասին ամէն տեսակի զրպարտութիւն ընեն իմ հետեւորդներս ըլլալուդ համար: Յնձացէք եւ ուրախացէք, որովհետեւ ձեր վարձատրութիւնը մեծ է երկինքի մէջ: Յիշեցէք որ նոյն ձեռով հալածանքի ենթարկուեցան ձեզմէ առաջ ապրող մարգարէներս ալ» (Մտ 5. 1:11):

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

«Տէր, ինչ լաւ կ'ըլլայ որ հոս մնանք. եթէ կ'ուզես՝ երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար» (Մր 17.4):

Մեր եկեղեցոյ հինգ գլխաւոր տօներն՝ Տաղաւարներէն մին է Այլակերպութիւնը, որ կը կոչուի նաեւ Պայծառակերպութիւնը:

Դէպքը տեղի կ'ունենայ հետեւեալ զարգացումներով:
Առիթով մը Յիսուս հարց կու տայ աշակերտներուն, ըսելով.
- Ժողովուրդը ինչ կ'ըսէ իմ մասին. ո՞վ եմ ես:
- Պարզ հարցում մը, ինչ որ պիտի մտածէր թերեւս ոեւէ անհատ, որ ժողովուրդի ծառայութեան նուիրումը է:

Աշակերտները կը պատասխանեն.
- Ոմանք քեզ Յովհաննէս Մկրտիչը կը կարծեն, ոմանք՝ Եղիա Մարգարէն, իսկ ուրիշներ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը:

Յիսուս հարցուց անոնց.
- Իս դո՞ւք ինչ կ'ըսէք. ո՞վ եմ ես:
Սիմոն Պետրոս պատասխանեց.
- Դուն Քրիստոսն ես, կենդանի Աստուծոյ Որդին:
Այս դէպքէն ետք Սրբազան անտարանիչը հետեւեալը կը պատմէ.-
Վեց օր ետք Յիսուս իր հետ առաւ Պեփրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները, եւ զանոնք լեռ մը հանեց: Հոն այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման ճերմակ եղաւ: Եւ ահա երեցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ... (Մր 17.1-3):

Այլակերպութեան դէպքն է այս, Պայծառակերպութեան Խորհուրդը, ինչ որ առաքեալներուն համար անմոռանալի պահ մը դարձաւ: Այնքան առիթնորդ, որ Պետրոս համարձակութիւնը պիտի ունենար ըսելու.
- **Տէր, ինչ լաւ կ'ըլլայ որ հոս մնանք, եթէ կ'ուզես՝ երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար... (Մտ 17.4):**

Ապա Սրբազան անտարանիչը կ'ըզրափակէ, ըսելով.- **ահա լուսատր ամպ մը ծածկեց զիրենք... (Մտ 17.5):**

Իսկ տեսալիս այս պահը կը կնքուէր աստուածային պատգամով մը, որ կու գար ամպերուն մէջէն.
- **Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ. անոր մօրիկ ըրէք... (Մտ 17.5):**
Երբ լեռնէ վար կ'իջնէին, առաքեալները լուռ էին՝ խորասուզուած իրենց ներաշխարհին մէջ:

Յիսուս պատուիրեց անոնց, ըսելով.
- **Մինչեւ որ Մարդու Որդին մեռելներէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը ոեւէ մէկուն մի՛ պատմէք (Մտ 17.9):**

Բայց արդէն Յիսուս իր աստուածային բնութեամբ եւ էութեամբ իջած էր առաքեալներու ներաշխարհին մէջ եւ կնքած անոնց սրտերն ու հոգիները, թէ յիրաւի իրենց Վարդապետը մարդացեալ Աստուածորդին էր:

Անոնք տեսած էին իրենց Վարդապետը աստուածային փառքով, ականջալուր դարձած՝ աստուածային պատգամին եւ ականատես՝ Մովսէս եւ Եղիա Մարգարէներու վկայութեան, առաջինը՝ իրեայ ժողովուրդին Օրէնքը սահմանող, իսկ երկրորդը՝ մարգարէութեան հայրը նկատուող, երկու մեծ դէմքերը:

ԱՌԱԿՍ ԶԻՆՉ ՅՈՒՅԱՆԷ...

ԹԻԹԵՆՆԵՐԸ

Թիթեռները որքան ատեն որ օդին մէջ կը շրջին, վսաս չեն պատճառեր, իսկ գետին իջնելով, երկիրը ապականող թրթուրներ կը ծնին:

Այսպէս պէտք է իմանալ այս առակը: Այնքան արեւն որ մեր միտքը երկինքի մէջ կը շրջի, կը շահի, եւ չի վստասեր: Իսկ երբ երկիր իջնէ, զարշեղի խորհուրդներ կը ծնի եւ մարմինը կ'ապականէ:

Մխիթար Գոշ



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prélature Arménienne du Canada



514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան
3401 Olivar Asselin Montréal, Quebec H4J 1L5

Court reject claims by Yerevan Mayor against Ishkhan Saghatelyan

YEREVAN—A Yerevan court has rejected the lawsuits filed by the Mayor of Yerevan against the representative of the Supreme Body of the ARF Armenia, deputy of the “Hayastan” faction, Ishkhan Saghatelyan, by which the municipality had demanded to fine Saghatelyan for holding emergency gatherings last year, Saghatelyan’s attorney Vahe Grigoryan reported on facebook.

“As I promised, the mayor of Yerevan lost for the 3rd and 4th time as well.

“Based on the fact of last year’s protests and emergency gatherings, the mayor of Yerevan filed 4 lawsuits against Ishkhan Saghatelyan, demanding that he be fined up to 300,000

AMD as an organizer, in total 1 million 200 thousand AMD.

“I am the representative of Ishkhan Saghatelyan in the 4 related cases, the protection of his rights and freedoms in these cases is carried out by me.

“On June 9, I already reported that the mayor of Yerevan lost two cases against Ishkhan Saghatelyan: VD/5036/05/22 and VD/5094/05/22.

“A little while ago, the Administrative Court of the Republic of Armenia satisfied our demands in cases VD2/0186/05/22 and VD2/0178/05/22, that is, it rejected the two claims of Yerevan Mayor against Ishkhan Saghatelyan,” Grigoryan wrote.

(Oragark)

Saghatelyan continues working visit to Brussels

BRUSSELS — Ishkhan Saghatelyan, the representative of the Supreme Body of the ARF Armenia, who is in Brussels on a working visit, continued political consultations with the deputies of the European Parliament, meeting with Peter Vitinov (Bulgaria), Costas Mavrides (Cyprus), Jordi Sole (Spain) and Nikos Papandreou (Greece).

During the meetings, Ishkhan Saghatelyan and the president of the ARF Hye Tahd European Office, Gaspar Karapetyan, thoroughly presented the humanitarian situation in Artsakh, which has been under siege for seven months, security challenges, the nature and manifestations of Azerbaijan’s ethnic cleansing policy.

Ishkhan Saghatelyan high-

lighted the need for a targeted and effective response by the executive power of the European Union to Azerbaijani aggression, noting that it is at least necessary to curb such continuous actions.

Thoughts were exchanged on ways to recognize the realization of Artsakh’s right to self-determination as a guarantee of conflict resolution and stable peace in the region.

Saghatelyan also conveyed that any solution to the conflict, which ignores the realization of Artsakh’s right to self-determination, will not be accepted by the Armenian people.

An agreement was reached to continue political consultations and mutual visits.

(Oragark)

Top Biden aide meets Armenian official

WASHINGTON — U.S. President Joe Biden’s national security adviser, Jake Sullivan, met with a senior Armenian official in Washington on July 6 for talks on regional security and U.S.-Armenian relations.

“We discussed the security situation and challenges in the region and the wider region,” Armen Grigorian, the secretary of Armenia’s Security Council, wrote on Facebook. “In this context, I presented to my interlocutor the Armenian side’s approaches to a number of important directions.”

In his words, bilateral ties were also on the agenda, with both men calling for closer U.S.-Armenian cooperation on “energy, economy and democracy.” Grigorian did not explicitly mention ongoing Armenian-Azerbaijani peace talks or give other details of the meeting.

Neither Sullivan nor his office issued a statement on the meeting that came one week after the Armenian and Azerbaijani foreign ministers concluded a new round of U.S.-mediated negotiations on an Armenian-Azerbaijani peace

treaty. The ministers held trilateral meetings in Washington with Sullivan and U.S. Secretary of State Antony Blinken.

Blinken said on June 29 that despite “further progress” made by them “there remains hard work to be done to try to reach a final agreement.” Armenian Prime Minister Nikol Pashinyan likewise noted that the progress “not significant.”

“Unfortunately, the text of the peace treaty between Armenia and Azerbaijan is not yet ready for signing,” Pashinyan said.

The Armenian Foreign Ministry said on June 30 that the conflicting sides continue to disagree on mechanisms for delimiting the Armenian-Azerbaijan border and organizing a dialogue between Baku and Nagorno-Karabagh’s leadership.

The U.S. ambassador to Armenia, Kristina Kvien, on Thursday reaffirmed Washington’s support for such dialogue. “The question of the rights and security of the population of Nagorno-Karabagh is central to the conflict between Armenia and Azerbaijan,” she said.

(RFE/RL)

OSCE PA Armenia delegate Lilit Galstyan updates Canadian parliamentarians on Artsakh crisis



ANCC-Western Region representatives, and Armenian MP Lilit Galstyan with BC Premier David Eby

VANCOUVER — During the June 30-July 4 OSCE-PA Annual Session in Vancouver, BC, ANCC-WR representatives Vahe Andonian, Vahe Agopian and Jack Deragopian contacted the OSCE executive members, delegates from friendly countries, and the Canadian and BC hosts including Deputy Premier Mike Farnworth, maintaining a consistent message about the crisis in Artsakh caused by Azerbaijan, the need for self-determination of the Artsakh Armenians, and the ways that OSCE countries could work to remedy the situation.

On July 4th, after the conclusion of the OSCE-PA Annual Session, ANCC-WR representatives Vahe Andonian and Vahe Agopian coordinated working meetings for Armenia delegate and MP Lilit Galstyan (ARF- Armenia faction) with Canadian federal and provincial parliamentarians.

The first meeting was with Premier of BC David Eby. Ms. Galstyan thanked the Premier for his ongoing support of the Armenian people, his hosting of an Armenian Genocide commemorative event on April 24th at the BC Legislature, and especially the flying of the flags of Armenia and Artsakh inside and outside the legislature as a sign of support and representing the desire for self determination and independence of the Armenians of Artsakh.

Ms. Galstyan congratulated Premier Eby on his recent achievement of BC’s highest office, and repeated her strong words from the OSCE PA session earlier in the day. She restated that Artsakh Armenians must maintain their self-determination and regain free access through the Lachin corridor, which has been illegally blocked by Azerbaijan for over 200 days.

Premier Eby thanked MP Galstyan and reiterated his support and acknowledged Artsakh’s legitimate aspirations and the need for international order and the rule of law.

Later, Ms. Galstyan visited MP Terry Beech, Parliamentary Secretary to the Minister of Finance, in his home constituency of Burnaby North – Seymour. MP Galstyan updated Mr. Beech on the current situation in

Artsakh, with the ongoing illegal blockade, the continuous violations of ceasefires and November 9 agreements, the recent attack and murder of four more defence soldiers, and all other illegal, criminal activities by the dictatorial Aliyev regime of Azerbaijan.

Furthermore, she expressed her concern that several members of the Canadian OSCE PA delegation voted against resolutions which held Azerbaijan accountable for its crimes.

MP Beech promised to look into the actions of the Canadian delegates surrounding issues of critical, existential importance to Artsakh and Armenia, and pledged to bring up the topics during future government caucus meetings. He offered his full support to the Armenian community.

Later, MP Galstyan met with BC Health Minister Adrian Dix, and MP Parm Bains at the Armenian Community Centre in Richmond, BC.

Minister Dix, who is well aware of the ongoing Azeri aggression against the indigenous Armenians of Artsakh, said that any action which intentionally deprives 120,000 inhabitants (including 30,000 children) of access to medical care and the necessities of life is criminal and cannot be tolerated by BC and Canada and the international community.

MP Bains took great interest in learning from MP Galstyan the details about Azerbaijan’s illegal actions and the precarious security and humanitarian position of the Artsakh Armenians, and even more the intentional cultural elimination and appropriation of Armenian historical legacy in the region. Only through self-determination and full security guarantees can the Armenians of Artsakh stop Azerbaijan’s genocidal actions and its intent to ethnically and culturally eliminate the thousands of years presence of Armenians in their homeland.

MP Bains committed to also speak with his government colleagues to reiterate the seriousness of the situation and the need for Canada to step up with concrete actions to protect the vulnerable, democratic population.

U.S.-mediated talks rejected by Artsakh

STEPANAKERT — Artsakh’s (Nagorno-Karabagh’s) leadership turned down last month a U.S. offer to negotiate with Baku on the Armenian-populated region’s “integration” into Azerbaijan, a senior official in Stepanakert said on July 3.

“There was a proposal of a direct Stepanakert-Baku dialogue mediated by America,” Artur Harutiunian, the parliamentary leader of Karabagh’s ruling party, told RFE/RL’s Armenian Service. “The issues that were supposed to be discussed were, in essence, an agenda pushed by Azerbaijan.”

This is why, he said, Stepanakert refused to attend the U.S.-mediated talks planned in an unnamed third country. The Karabagh leaders want to discuss instead the lifting of the Azerbaijani blockade of the Lachin cor-

ridor and other humanitarian issues, added Harutiunian.

The Russian newspaper Komsomolskaya Pravda claimed in mid-June that the United States has issued an ultimatum to the Karabagh Armenians, saying that they must negotiate on Azerbaijan’s terms or risk a “use of force.” Official Moscow was quick to express concern over the report, with Foreign Ministry spokeswoman Maria Zakharova effectively accusing Washington of resorting to “threats” and “blackmail.”

Commenting on the report, the U.S. Embassy in Yerevan said only that Washington welcomes any dialogue that could help to secure “the rights and security” of Karabagh’s ethnic Armenian population.

The U.S. State Department raised eyebrows in Stepanakert

and Yerevan in late May when it welcomed “amnesty” offered to Karabagh’s leaders by Azerbaijani President Ilham Aliyev on the condition of their “surrender” to Baku. The Armenian Foreign Ministry said Aliyev’s statement “contained clear threats” to Karabagh’s security.

Armenian opposition leaders and other critics of Prime Minister Nikol Pashinyan also denounced the State Department’s perceived pro-Azerbaijani stance. They said it was made possible by Pashinyan’s recognition of Azerbaijani sovereignty over Karabagh.

The Karabagh president, Arayik Harutiunian, said last week that Karabagh will continue to assert its right to self-determination despite mounting pressure from Azerbaijan.

(RFE/RL)

A Mari Usque Ad Mare

\$700 MILLION TTC INVESTMENT BUS FLEET

In a recent press announcement made on behalf of Dominic LeBlanc, Minister of Intergovernmental Affairs, Infrastructure and Communities, Chrystia Freeland, Deputy Prime Minister and Minister of Finance, and Ya'ara Saks, MP for York Centre, joined Jennifer McKelvie, Deputy Mayor of the City of Toronto, and Fort Monaco, Chief of Engineering and Infrastructure of the Toronto Transit Commission (TTC), declared a new joint investment of \$700-million that will be used for the electrification of the TTC's bus fleet.

Minister Freeland said: "Cities, including Toronto, have had no greater partner than our federal government. That's why last July, our government provided \$750 million to provinces and territories to support municipalities facing pandemic-related transit shortfalls. Today's investment in electric busses delivers new, more comfortable options for Torontonians, and will help the city reduce both its emissions and fuel costs. This investment is yet another example our work to build affordable and sustainable transit for Canadians in communities from coast to coast to coast."

"The City of Toronto is proud to work with the Government of Canada to invest in cleaner and greener transit infrastructure. This major investment by our two governments will add 340 zero emission buses to our TTC fleet along with the infrastructure to support those vehicles," said Jennifer McKelvie, Deputy Mayor of the City of Toronto. "This is good news for our transit system and the environment. Thank you to the federal government for working with our municipal government to invest in public transit infrastructure for the future," said Deputy Mayor McKelvie.

GOVERNMENT OF CANADA INVESTS \$7.7-MILLION IN MANITOBA MÉTIS FEDERATION

